ՕՁԻ ՍԵՐՄԸ

Սիրելի Աստված, մեծ ու զորավոր Աստված, Ով ամեն ինչ Իր Հոգու զորությամբ ձևավորեց, և բերեց Հիսուս Քրիստոսին՝ Իր միածին Որդուն, Ով մեռավ մեզ՝ մեղավորներիս համար, Արդարը՝ անարդարների համար, որպեսզի մեզ վերադարձնի այս հրաշալի հաղորդակցությանը, որ կրկին ունենք Աստծո հետ, ինչպես սովորեցինք օրհնյալ Խոսքում, որ մենք հաղորդակցություն ենք ունեցել Նրա հետ աշխարհի հիմնադրումից առաջ. «Երբ առավոտյան աստղերը միասին երգում էին, ու Աստծո բոլոր որդիները ուրախությամբ աղաղակում էին, դեռևս աշխարհի հիմնադրումից առաջ»: Մենք չգիտենք, գուցե դա հենց այն ժամանակ էր, երբ Գառնուկը մորթվեց, որ երբ Աստված Իր մեծ մտքում տեսավ մեզ աղաղակելիս և ուրախանալիս մեր փրկության համար Հիսուսի միջոցով:

2 Եվ այս երեկո մենք միայն կանխահաշակում ենք այն մեծ փառավոր աստվածային փառքը, որը կհայտնվի Նրա երկրորդ Գալստյան ժամանակ: Բոլոր հիվանդություններին ու տառապանքներին վերջ կդրվի: Այդ ժամանակ մենք Նրա փառավոր մարմնի նման մարմին կունենանք, որովհետև կտեսնենք Նրան, ինչպես որ է: Այստեղ երբ տեսնում ենք, թե մեր ձեռքերն ինչպես են կնճռոտվում, մազերը ճերմակում և ուսերը կորանում եմ, գիտակցում ենք, որ մահկանացու ենք և դեպի հողն ենք դառնում, որին խոնարհել ենք մեր գլուխները հիմա, և որտեղից որ ենք: Բայց Տե՛ր Աստված, նույնքան հաստատ, որքան որ Դու Աստված ես, Դու խոստացել ես, որ մենք դարձյալ հարություն կառնենք վերջին օրը, և մենք հավատում ենք դրան:

3 Հանդիսավոր կերպով մենք այս երեկո մեր հավատքով կանգնած ենք Քո ներկայության մեջ, գալով համարձակությամբ, որովհետև Հիսուսն է մեզ պատվիրել դա անել: Ոչ թե մեր կատարած որևէ լավ բանի հիման վրա, որովհետև մենք ոչ մի ճիշտ բան չենք արել, այլ խոնարհությամբ գալիս ենք, դավանելով, որ տիրում ենք այս գանձին շնորհիվ Իր շնորհքի, որ վիճակված է մեզ: Դրա համար մենք գալիս ենք խնդրելու, որ օրհնես մեզ այս երեկո Խոսքի մատուցման ժամանակ: Որովհետև

գրված է, որ. «Մարդ ոչ միայն հացով կապրի, այլ ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Եվ թող Աստծո շուրթերը խոսեն այս երեկո: Թող խոսքերը հնչեն և խորությամբ թափանցեն մեր՝ լսողներիս, սրտերի մեջ և լցվեն Քո Հոգով ու ներկայությամբ: Որովհետև մենք սա խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

4 Այսօր և երեկ՝ անցած երեկո, ավելի ճիշտ, և այսօր մենք խոսում էինք այս թեմայով, նախ դրան վերնագիր տանք՝ *Ինչո՞ւ մենք հարանվանություն չենք:* Եվ մենք բավականին խիստ ձևով արեցինք դա՝ այն, թե ինչու մենք հարանվանություն չենք և ինչու հարանվանություններին չենք հավատում: Որովհետև մենք տեսնում ենք դա Աստվածաշնչում, որ հարավանությունները երբեք Աստծուց չեն սահմանվել, դրանք սատանայից են սահմանվել, և ապացուցեցինք դա Աստվածաշնչով: Եվ թե ինչպես են հարանվանությունների միջոցով մոլորություն մտցնում: Մենք հիմա ասում ենք սա շտկելու և այս խորանն Աստծո օրհնյալ Խոսքի շուրջ հաղորդակցությանը բերելու համար: Որովհետև մեր հույսերը կառուցված չեն այն բանի վրա, ինչ հարանվանությունը կամ որևէ մարդն է ասում, այլ Տեր Աստծո ասածների վրա են կառուցված: Եվ դա միակ ձևն է, որով մենք կարող ենք ճիշտ ձևով ուղղվել:

5 Այսօր առավոտյան կարծեմ հինգ տարբեր ուսմունքների մասին խոսեցի, որոնք դուրս են եկել հարանվանության միջոցով, որոնց մասին Աստվածաշնչում բացարձակապես չի խոսվում, որոնց հետ հաշտվել են բողոքական եկեղեցիները և սովորեցնում են որպես վարդապետություն. նույն բանը, ինչ հին մայր պոռնիկը՝ Կաթոլիկ եկեղեցին է քարոզում, և մտել է բողոքական եկեղեցու մեջ: Եվ մենք խոնարհվում ենք նույն բանին, ինչը հակառակ է Աստծո Խոսքին:

6 Առաջին հարանվանական եկեղեցին, մենք այսօր նայեցինք սա Նիկիայի հայրերի պատմության մեջ, Նիկիայի եկեղեցիները: Առաքյալների մահից հետո եկան Նիկիայի հայրերը և մի քանի տարի շարունակեցին այդպես: Երեք հարյուր քսանհինգ տարի անց, ի վերջո եկան Նիկեյա, Ֆրանսիա, որտեղ տեղի ունեցավ մեծ Նիկիայի խորհուրդը: Եվ այնտեղ նրանք կազմեցին այս դոգմաները, որոնք կաթոլիկ եկեղեցին ունի հիմա, և դա նաև փոխանցվեց բողոքականներին:

7 Եվ ինչպես այսօր առավոտյան ասացի ուսուցման

ժամանակ. «Այդ եկեղեցական ժամանակաշրջաններից յուրաքանչյուրը մինչև այդ, այդ Թեսաղոնիկեի եկեղեցական ժամանակաշրջանը, խավար ժամանակաշրջանի հարյուր հիսուն տարի, մեկ անգամ չէ, որ նրանց ասվել է. «Դու դեռ ունես Իմ Անունը»:

8 Իսկ մյուս կողմից նրանք այլևս Քրիստոսի մեջ չէին, նրանք հարանվանական անունով դուրս եկան. «Կաթոլիկ, Լյութեր, Վեսլեյ, մկրտական, երիցական, հոգեգալստական», և այսպես շարունակ:

9 Բայց հենց ժամանակաշրջանի ավարտին Նա ասաց. «Ահա քո առջև բացված դուռ դրեցի»: Տեսնո՞ւմ եք: Եվ դա այն ժամանակաշրջանն է, որում հավատում ենք, որ մենք գտնվում ենք հիմա, բաց դռան ժամանակաշրջան, Լավոդիկեայի եկեղեցուց վերջին ելքից առաջ:

10 Եվ դա կազմում է ուղիղ երեք հարյուր քսանհինգ տարի մինչև Լավոդիկեայի խորհուրդը: Եվ այնտեղ նրանք ընդունեցին այս ձևերը ինչպիսիք են՝ ջրցողումը, ջուր լցնելը, կեղծ մկրտությունը, կեղծ սուրբ հոգին, և մնացած մյուս բաները: Նրանք ընդունեցին դա:

11 Իսկ հետո՝ երբ Լյութերը, քահանա լինելով, դուրս եկավ կաթոլիկ եկեղեցուց, այս բաներն էլ բերեց դրա հետ: Այնտեղից դուրս եկավ Ցվինգլին, Ցվինգլիից դուրս եկավ Կալվինը, Կալվինից դուրս եկավ Վեսլեյը, օհ, և այսպես շարունակ: Եվ նրանք պարզապես շարունակում էին այդ դոգմաները փոխանցել: Եվ ինչպե՞ս կարող է Աստված առաջնորդել Իր Եկեղեցին, երբ նրանք գնում են այն ճանապարհներով, որոնք Նա երբեք չի բացել նրանց առաջնորդելու համար:

12 Եվ հիշե՛ք. Հայտնության 17-ում մենք «կին» ենք տեսնում: Այս բառերը պարզ են: Դրանք գրված են Աստվածաշնչում, ուստի կարծում եմ, որ ես կարող եմ դրանք ասել: Գրված է, որ այս կինը «պոռնիկ էր»: Դա նշանակում է, որ նա վատ համբավ ունեցող կին էր, որ նա ամուսնացած էր համարվում և պոռնկություն էր անում աշխարհի հետ: Եվ նա ուներ... Նա «ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՄԱՅՐ ԷՐ», հետևաբար աղջիկներ ուներ: Եվ աշխարհագրականորեն մենք գծեցինք դա, լինելով...Եվ ինքս այնտեղ՝ Սուրբ Գրքում, տեսնելով դա, տեսնելով իր վարդապետությունները և այլն, հավատում եմ, որ Տերը դա կատարելապես հստակեցնում է, որ դա չի կարող լինել ոչ այլ ինչ, քան Կաթոլիկ եկեղեցին: Դա

միակն է, ինչ կարող է լինել: Եվ ի՞նչ ծնեց նա: Բողոքական եկեղեցիներ: Ճիշտ է, նա ծնեց:

13 Եվ նա ձեռքին իր պոռնկությունների գինու գավաթն ուներ, և նա դա տալիս էր երկրի թագավորներին: Հոգևորապես ասած՝ նա էր իշխում ամբողջ աշխարհի վրա: Եվ դա միանգամայն ճիշտ է: Չկա մեկ այլ...

14 Տեսեք, եկեք, մենք կարող էինք անդրադառնալ Դանիելի գրքին և հայացք գցել պատկերի վրա: Նայեք պատկերին. ոսկյա գլուխը բաբելոնյան թագավորությունն է, պղինձը...ավելի ճիշտ արծաթը՝ Մեդեա-Պարսկաստան է, պղինձը՝ Ալեքսանդր Մեծն է և այլն, հունական թագավորությունը, այնուհետև Հռոմեական կայսրությունը, Արևելյան և Արևմտյան Հռոմը, երկու ոտքերը:

15 Եվ ուշադրություն դարձրեք, այս տաս թագավորություններում, որոնք ճշգրտորեն համընկնում են այդ տասը եղջյուրների հետ, որոնց մասին խոսում էինք այս առավոտ, այդ տասը թագավորություններից ամեն մեկում, որը պետք է վեր ելներ, երկաթն ու կավը խառնված էին իրար: Եվ այդ երկաթը սրունքներից է սկսվում, որը Հռոմն էր: Եվ այնտեղ հռոմեականության մի շետր կա խառնված կաթոլիկ եկեղեցու միջոցով Երկնքի տակ եղող ամեն ազգի մեջ: Դա միանգամայն ճիշտ է: Եվ նրանք ոչ մի տեղ չէին խառնվի:

16 Եվ նրանք իրար մեջ կամուսնանան: Աստվածաշունչն է ասում, որ կամուսնանան: Նայեք նրանց այսօր: Ձեր տղան հանդիպում է կաթոլիկ աղջկա հետ, երբ նրանք ամուսնանան, խոստանալու են, որ իրենց երեխաներին մեծացնելու են կաթոլիկ, տեսնում եք, ընդհակառակը: Տեսնում եք, դա հակառակ կողմի զորությունը կոտրելու համար է:

17 Բայց ի՞նչ է սա: Աստվածաշունչը հայտարարում է, որ այդ ամենը պոռնկություն է: Հիմա ի՞նչ եք անելու: Դա ճիշտ է: Եվ ինչպես մարդկանց մեղքերը կփոխանցվեն... Մենք հետ գնացինք Երկրորդ Օրինաց և ցույց տվեցինք, որ ապօրինին, ապօրինի երեխան Տիրոջ ժողովքի մեջ չէր կարող մտնել տասնչորս տերունդ: Դա օրենքի տակ էր: Իսկ Քրիստոսը եկավ օրենքը խստացնելու: Որքա՞ն ավելին դա հիմա է:

18 Ինչ է կատարվում այս, ի՞նչ է կատարվում այսօրվա փողոցային անառակների հետ, այս սիգարետ քաշող

կանանց, կարճատաբատ հագնող, մազերը կտրած անառակների հետ և այլն: Ի՞նչ է կատարվում նրանց հետ: Որովհետև իրենց մայրիկն այդպես է վարվել: Սա անօրենության պատիժ է, որը փոխանցվում է սերունդից սերունդ: Ահա թե ինչ է դա: Եվ ի՞նչ ունենք մենք: Մենք հասել ենք նրան, որ հսկա կեղտոտ մեղքերի կույտ է կուտակվել:

19 Դրա համար Աստված այնտեղ բարձրացրեց Ռուսաստանը ատոմային ռումբով, որպեսզի ջնջի նրան, ինչպես եղավ նախաջրհեղեղյան ջրհեղեղը, երբ ամպերը բարձրացրեց: Անկասկած, Նա արեց դա: Աստվածաշունչն էլ է այդպես ասում: Ռուսաստանը՝ անաստված երկիրը, ինչպես որ են, անաստված, բացարձակապես գործիք է Ամենակարող Աստծո ձեռքերում: Ճիշտ այնպես, ինչպես Նաբուգոդոնոսոր թագավորն էր՝ Իսրայելը ոչնչացնելու համար, որովհետև նրանք դադարել էին քայլել Աստծո հետ, Ռուսաստանը բարձրանում է կաթոլիկ եկեղեցուց «սուրբերի վրեժն առնելու», սուրբերի արյունը թափելու համար: Աստվածաշունչն է այդպես ասում: Նա ամեն բանի համար վճարելու է:

20 Եվ այսպես, նայեք այստեղ, եթե նրանց մայրիկը երգչախմբային աղջիկ է եղել, և տատը, իսկ նրա մայրիկը թեթևաբարո, ի՞նչ է նա այսօր: Ռոք-էնդ-ռոլի մերկապարուհի: Ի՞նչ են դառնալու նրա երեխաները:

Իսկ դուք ասում եք. «Աստված կանի՞ դա»: Այո՛, պարո՛ն:

21 Աստված հատուցում է երեխաների անօրենությունը սերունդին, մինչև տասնչորրորդ սերունդ: Եվ եթե Քրիստոսը եկավ խստացնելու այն, մենք կասեինք. «Հարյուր սերունդ կամ հինգ հարյուր սերունդ»: Չէ որ Նա ասաց. «Նախնիներին, լսել եք, որ նախնիներին ասվեց. «Մի՛ սպանիր»: Բայց Ես ձեզ ասում եմ, եթե մեկն առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա, արդեն սպանել է»: Լսել եք, որ նախնիներին ասվեց. «Ծնություն մի՛ գործիր»: Բայց Ես ձեզ ասում եմ, ով որ մի կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացել է նրա հետ»: Նա այն արեց...Ի՞նչ է նշանակում *խստացնել:* «Մի քանի անգամ սաստկացնել այն»: Եվ եթե օրենքի տակ դա տասնչորս սերունդ էր, ուրեմն ինչքա՞ն է հարկավոր նույն բանի համար այսօր:

22 Երիտասարդ, միջին տարիքի և ամուսնացած տղամարդիկ այլևս հարգանք չունեն իրենց ամուսնական

ուխտի նկատմամբ: Նրանք սովորական շների նման պարզապես կանանց առնում և ամենուրեք ապրում են նրանց հետ: Ծունն ավելի շատ հարգանք ու բարոյականություն ունի, քան որոշ մարդիկ: Գիտեմ, որ շատ խիստ է, բայց դա ճշմարտություն է:

23 Ինչո՞ւ: Եվ եկեղեցիները շարունակում են այդպես և ոչինչ չեն ասում դրա մասին: Ինչո՞ւ: Նրանք վարվում են ճիշտ այնպես, ինչպես իրենց մայրիկը: Եկեղեցիները ժառանգել են դա: Որովհետև եկեղեցին և այս բողոքական եկեղեցին կաթոլիկ եկեղեցուց են դուրս եկել, և կաթոլիկ եկեղեցու մեղքերը հատուցվում են բողոքականերին: Անկասկած դա այդպես է, դրա համար կաթսան չի կարող թեյամանին «կեղտոտ» անվանել: Դա միանգամայն ճշմարտություն է:

24 Մենք հիմա տեսնում ենք, Սուրբ Գրքում էլ տեսանք... Ես այս երեկո ոչ մի գրառում չեմ տեսել այստեղ՝ սեղանի վրա: Ես ասել էի. «Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ Աստված երբևէ հարանվանություն է սահմանել: Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ Աստված կին քարիզիչ է նշանակել: Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ Աստված ջրով ցողել է սահմանել: Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ Աստված ջուր լցնել է սահմանել: Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ Աստված որևէ մեկին պատվիրել է մկրտել «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով: Գտեք այդ բաները»: Մինչդեռ մենք շարունակ անում ենք դրանք: Դա կատարվում է հենց եկեղեցում:

25 Հիմա, ես ձեզ ասացի. «Ձեր կարծիքով, մենք չենք կարող մկրտական լինել, որովհետև մենք հավատում ենք, որ նրանց մկրտել են Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: Աստվածաշնչում չկա մեկը, որ այլ կերպ մկրտված լինի: Ցույց տվեք ինձ մի տեղ, որտեղ մեկը մկրտվել է «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով, ես ձեռքերս կբարձրացնեմ և կասեմ, որ սուտ մարգարե եմ»:

26 «Եվ եթե Աստվածաշունչն ասում է, որ պետք է «Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվեք», դա նշանակում է, որ այդպես էլ պետք է դա անեք: Պողոսը նրանց պատվիրեց վերամկրտվել: Կարևոր չէ, թե նրանք ինչպես էին մկրտվել, նրանք պետք է գային և նորից մկրտվեին: Նրանք մկրտված էին նույն մարդու կողմից, ով Հիսուս Քրիստոսին էր մկրտել. Հովհաննես Մկրտիչը: Նա ասաց. «Դա այլևս չի գործի: Դուք պետք է գաք և նորից

մկրտվեք»։ Եվ նրանք պետք է դա անեին նախքան Սուրբ Հոգին ստացան։ Դա Աստծո ծրագիրն էր»։

27 Ես այս երեկո կարող էի մի փոքր ավելի խորանալ։ Ինչո՞ւ։ Հիսուսը պահում է Իր Խոսքը։ Հավատո՞ւմ եք դրան։ Հիմա, գրեթե բոլորդ այստեղ էիք այս առավոտ, բայց ես ուզում եմ մի փոքր ավելի անդրադառնալ դրան։

28 Ինչո՞ւ Պողոսը հանձնա…պատվիրեց դա այն բանից հետո, երբ դա արված էր։ Պողոսն ասում է. «Եթե նույնիսկ երկնքից մի Հրեշտակ գա և ավետարանի այլ բան, թող անիծյալ լինի»։

29 Դուք հիմա ասում եք. «Մենք նոր Լույս ենք ստացել դրա վերաբերյալ»։ Ո՛չ, դուք չեք ստացել։ Ահա թե ինչով սատանան եկավ Եվայի մոտ, նոր Լույսով։ Դուք ոչ մի նոր Լույսի կարիք էլ չունեք։ Դու պետք է քայլեք այն Լույսի մեջ, որ Աստված արդեն դրել է այստեղ. ահա և վերջ։

30 Հիմա նայեք սրան, ինչքան պարզ է։ Երբ նրանք իջան Այլակերպության լեռան վրայից, Հիսուսն ասաց Իր աշակերտներին. «Մարդիկ ի՞նչ են ասում, թե ով եմ Ես՝ Մարդու Որդին»։

«Ոմանք ասում են, թե Մովսեսն ես կամ Եղիան, մարգարեներից մեկը»։

Նա ասաց. «Իսկ դուք ի՞նչ եք ասում. ո՞վ եմ Ես»։

31 Նա ասաց, Պետրոսն ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»։

32 Հիսուսն ասաց. «Երանի՜ քեզ, Սիմոն, Հովնանի որդի, որովհետև մարմինն ու արյունը քեզ չհայտնեցին սա»։ Տեսնում եք, դա չի գալիս հոգևոր ճեմարանների, հարանվանությունների միջոցով։ «Մարմինն ու արյունը քեզ չհայտնեցին սա։ Դու դա աստվածաբանական դպրոցում չսովորեցիր։ Այլ Իմ Հայրս, որ երկնքում է հայտնեց սա քեզ։ Եվ այս վեմի վրա Ես կշինեմ Իմ Եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան», հոգևոր հայտնության վրա, թե Ով է Նա։

33 Ուշադրությո՛ւն դարձրեք. «Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետրոսն ես։ Եվ Ես քեզ Թագավորության բանալիները կտամ, և ինչ որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված կլինի երկնքում»։ Հիմա, Նա պիտի պահեր Իր Խոսքը, այլապես Աստված չէր լինի։ Դրանից հետո մի քանի օր անց Նա խաչվեց, հարություն առավ, բարձրացավ երկինք, և Պենտեկոստեի օրը Պետրոսը բացեց Ավետարանը։

Արդյոք նա արե՞ց դա: Անշուշտ, արեց: Հիմա նայեք, երբ նա...

34 Բոլորը ծաղրում էին նրանց, որովհետև նրանք լցված էին Հոգով: Նրանց «հերետիկոս, սուրբ թռչկոտողներ» կամ նմանատիպ անուններով էին կոչում: Նրանք նույնիսկ ծիծաղում և ասում էին. «Նրանք նոր գինով են լցված»:

35 Եվ Պետրոսը կանգնելով նրանց մեջ, իր ձայնը բարձրացրեց և ասաց. «Եղբայր մարդիկ, լսե՛ք իմ ձայնը: Ակա՛նջ դրեք իմ խոսքերին և լսե՛ք ինձ: Սրանք հարբած չեն, ինչպես դուք ենթադրում եք, որովհետև դեռ միայն օրվա երրորդ ժամն է, այլ սա Հովել մարգարեի միջոցով ասվածն է՝ «Եվ վերջին օրերին այնպես կլինի, որ Իմ Հոգուց կթափեմ», և ինչ է Նա անելու վերջին օրն Իր որդիների, դուստրերի, աղախիների և այլոնց վրա»:

36 Եվ երբ նրանք սկսեցին լսել դա, նրանք խոցված էին մինչև իրենց սրտի խորքը: Որովհետև լսում էին մի մարդու, ով այբուբենը չգիտեր, մինչդեռ նրանք ուշադրություն դարձրին նրան, հասկացան, որ նա իր ներսում Ինչ–որ բան ուներ, որ վառում էր նրան՝ Սուրբ Հոգին: Կանգնեցնե՞լ նրան: Դա նման կլիներ քամոտ օրը չոր շենքի վրա հրդեհը հանգցնելու փորձին: Դա ձեզ չէր հաջողվի: Նա լցված էր Սուրբ Հոգով: Եվ ի՞նչ արեց նա հիմա:

37 Նրանք ասացին. «Եղբայր մարդիկ, ի՞նչ պետք է անենք, որ փկվենք»:

38 Հիմա զգո՛ւյշ Պետրոս, դու ունես Թագավորության բանալիները: Տեսնո՞ւմ եք:

39 Հիմա, երբ Հիսուսը երրորդ օրը հարություն առավ, Նա չուներ երկնքի Թագավորության բանալիները: Դուք այդ գիտեի՞ք: Նա ասաց. «Ես ունեմ մահվան ու դժոխքի բանալիները», բայց ոչ Թագավորության, որովհետև դրանք Պետրոսին էին տրվել:

40 Հիսուսն ասել էր. «Պետրո՛ս, ինչ որ արձակես երկրի վրա, արձակված կլինի երկնքում, և ինչ որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում»:

41 Այժմ նա այստեղ կանգնած է բանալիներով՝ այս օրհնյալ բանը աշխարհին բացելու համար: Եվ ահա նա իր ձեռքում բանալիներ ունի: Եվ նրանք հարցնում են. «Ի՞նչ պետք է անենք, որ փրկվենք»: Հիմա, կարևոր չէ, թե

առաքյալն ինչ էր ասել, որ անեն, Աստված պետք է ճանաչի դա երկնքում, եթե Նա տվել է իրեն այդ իշխանությունը:

42 Պետրոսն ասաց. «Ապաշխարեցե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կստանաք»: Ճի՞շտ է: Ահա թե ինչու բանալիները երկնքում շրջված են որևէ այլ անվան, որևէ այլ ձևի և որևէ այլ, որևէ այլ տեսակի համար: Բանալիները շրջվեցին երկրի վրա և շրջվեցին երկնքում, կամ էլ Հիսուսը չի պահել Պետրոսին տվաց Իր Խոսքը: Եվ դրանից հետո Աստվածաշնչի բոլոր տեղերում նրանք մկրտվել են Հիսուս Քրիստոսի Անունով: Իսկ նրանք, ովքեր մինչ այդ մկրտված են եղել պետք է գային և նորից մկրտվեին Հիսուս Քրիստոսի Անունով, որպեսզի Սուրբ Հոգին ստանան: Դա է ճիշտը: Այն դեռևս նույն ձևով է ընթանում:

43 Եվ այսպես, եթե մենք սովորեցնում ենք մկրտությունը «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով, դա կեղծ մարգարեություն է: Ես հիմա չեմ ուզում վիրավորել ձեզ, բայց ես պետք է ամրապնդեմ սա, որպեսզի եկեղեցին իմանա ինչն ինչոց է: Մենք այստեղ անգրագետ ցնդածների խումբ չենք. մենք գիտենք, թե Աստծո Խոսքի մեջ որտեղ ենք կանգնած: Հասկանո՞ւմ եք, գիտենք: Ես մարտահրավեր եմ նետում ցանկացածին, որ ցույց տա ինձ մի տեղ, որտեղ որևէ մեկը մկրտված է եղել «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով: Դուք հիմա սուտ մարգարեի՞ն եք լսելու, թե՞ Ճշմարտությանը: Քննեցե՛ք Գրքերը: Դա ձեր գործն է:

44 Ցույց տվեք ինձ, թե որտեղ մի մարդ Աստվածաշնչում, որտեղ եկեղեցին Աստվածաշնչում սահմանվել է որպես հարանվանություն: Ցույց տվեք ինձ Աստվածաշնչում, թե որտեղ են նրանք կին քարոզիչ նշանակել: Ցույց տվեք ինձ Աստվածաշնչում, թե որտեղ են այս բոլոր բաները, որոնց մասին մենք խոսեցինք, երբևէ սահմանվել Աստվածաշնչում: Դրանք այնտեղ չկան: Մի տեղ ասեք ինձ: Գնում ես հարանվանության մեջ...

45 Երբ մեթոդականները վեր բարձրացան, նրանք սրբություն էին քարոզում: Դա լավ է: Բայց երբ նրանք այդ բանն արեցին, կազմակերպություն ստեղծեցին, և դա հարցը լուծեց: Դրա համար է Աստվածաշունչն ասում. «Դու անուն ունես»:

Դուք ասում եք. «Ես քրիստոնյա եմ»:

«Լավ, ո՞ր հարանվանությանն եք պատկանում»։

46 Դուք ասում եք. «Մեթոդական», ուրեմն պոռնիկ եք։ «Ես մկրտական եմ», պոռնիկ եք։ «Հոգեգալստական եմ», պոռնիկ եք։ Դուք պատկանում եք այդ եկեղեցուն։

47 Դուք պետք է Քրիստոսին պատկանեք։ Իրավունք չունեք ասելու. «մեթոդական», «մկրտական»։ Եթե դու քրիստոնյա ես, քրիստոնյա ես սրտով։

48 Այդ հարանվանություններից յուրաքանչյուրն էլ կարող է զավակներ արտադրել, Աստծո զավակներ, դա ճիշտ է։ Բայց երբ որ դուք մտածում եք, որ երկինք կգնաք միայն նրա համար, որ մեթոդական կամ մկրտական եք, սխալվում եք։ Դրա համար ենք մենք հեռու մնացել այդ բանից։

Ինչո՞ւ մկրտականները չեն կարողանում տեսնել։

49 Ես հարցրեցի այստեղ մի մեթոդականի, որ թեզ էր գրել, վաղուց էր գրել։ Նա ասաց. «Միակ բանը, որ մենք ձեր դեմ ունենք, այն է, որ դուք շփվում եք հոգեգալստականների հետ»։

Ես ասացի. «Մենք»–ը ո՞վ է։

«Մենք՝ մեթոդականներս»։

50 Ես ասացի. «Լավ, ես ձեզ կասեմ, թե ինչ կանեմ։ Ես կգամ ձեր քաղաք, և թող մեթոդականները դա հովանավորեն»։

«Օհ,— ասաց,— անշուշտ, մենք չեն կարող դա անել»։

51 Ես ասացի. «Ես հենց այդպես էլ մտածում էի։ Ես մնում եմ հոգեգալստականների հետ, որովհետև հոգեգալստականները հավատում են դրան։ Դա ճիշտ է։ Նրանք միավորվում են դրա շուրջ։ Նրանք միակն են, ովքեր օգուտ են քաղում դրանից»։

52 Քանի՞սն են կարդացել այդ հոդվածը «Լայֆ» ամսագրում, հենց վերջերս, հոգեգալստական եկեղեցու մասին։ Սա դարի ամենամեծ ֆենոմեններից մեկն է։ Նրանք մեկ տարում ավելի շատ նորադարձներ են ունեցել, քան մնացած բոլոր եկեղեցիները միասին վերցված։ Ինչո՞ւ։ Անգամ իրենց սխալների Աստված շարունակում է տանել իրենց առաջ, որովհետև հավատում են Ճշմարտությանը և քայլում են դրա հետ։ Սա Ճշմարտություն է։

53 Բայց ի՞նչ ենք անում մենք հիմա։ Տեսնո՞ւմ եք։ Դրա համար մենք հարանվանություն չենք։ Եվ

նույնքան հաստատ, որքան որ հոգեգալստականները կազմակերպվում են…

54 Քառասուն տարի առաջ երբ առաջին անգամ Սուրբ Հոգին հեղվեց հոգեգալստական եկեղեցու վրա, և նրանք սկսեցին խոսել լեզուներով, պարգևներից մեկն է: Դա պարգևներից ամենափոքրն է: Ըստ Պողոս Առաքյալի, պարգևներից ամենափոքրը լեզուներով խոսելն է: Եվ հենց որ այն իջավ. «Ո՛հ,— ասացին նրանք,— մենք հիմա ունենք Դա», և նրանք կազմակերպություն ստեղծեցին, Գլխավոր խորհուրդ, որը հիմա Աստծո Ասամբլեաններն են: «Ո՛հ, ոչ ոք չունի Այն, քանի դեռ չի խոսել լեզուներով»: և Աստված անմիջապես հեռացավ նրանցից և թողեց նրանց նստել այնտեղ: Անկասկած: Այո՛, պարո՛ն:

55 Եկան միադավանները և հայտնաբերեցին մկրտությունը Հիսուսի Անունով: Նրանք ասացին. «Ո՛հ, մենք ստացել ենք Դա», նրանք կազմակերպվեցին: Ի՞նչ արեցին նրանք: Աստված պարզապես առաջ գնաց և թողեց նրանց նստած այնտեղ:

Սա՝ «Նա ով ուզում է, թող գա»-ի համար է:

56 Տեսնում եք, միադավանները չեն կարող գնալ Ասամբլեանների մոտ: Ասամբլեաններն էլ չեն կարող գնալ միադավանների մոտ: Ես զրուցել եմ իրենց լավագույն այրերի հետ, որոնց նրանք ունեն՝ պարոն Գրոսի, դոկտոր Պոպի և շատերի հետ: Այրեր, որոնք հանդիսանում են ուժեղ այրեր…Ես նստել եմ նրանց հետ: Ես հարցրել եմ. «Դուք որպես գիտնական ինչպե՞ս կարող եք ուսուցանել այդ սկզբնական ապացույցը»:

57 «Դե,— ասացին,— Բրանհամ եղբայր,— նրանցից մեկ, երկու թե երեքը շատ անկեղծ էին, ասացին,— մենք գիտենք, որ դա սխալ է, բայց ի՞նչ կարող ենք անել»: Եթե մենք հիմա որևէ բան ասենք դրա մասին, դա կխափանի ամբողջ ձրագիրը»: Իհարկե, և դուք այլևս եպիսկոպոս կամ գլխավոր դիտորդ չեք լինի: Դա է գաղափարը:

58 Եղբա՛յր, ավելի լավ է ես փոքրիկ եկեղեցի ունենամ անկյունում, կամ սոճու ծառի տակ քարոզեմ և ունենամ Ճշմարտությունը, անշուշտ, և իմանամ, որ դու Ճշմարտությունն ես ասում: Մարդիկ Ճշմարտությունն են ուզում: Եվ դու պարտավոր ես՝ որպես քրիստոնյա, վկայել Ճշմարտության մասին: Աստված պահանջելու է դա քեզանից:

59 Հետո, այս բաների վերաբերյալ, եթե Հիսուս Քրիստոսի Անունով չես մկրտվել, և այս բաները չես արել և չես ստացել Սուրբ Հոգին…

60 Դուք ասում եք. «Ո՛հ, ես խոսել եմ լեզուներով»: Դա դեռևս չի նշանակում, որ դուք ստացել եք Սուրբ Հոգին:

61 Ես տեսել եմ, թե ինչպես են կախարդները, վհուկները, դևերը և այլն խոսում լեզուներով: Անկասկած: Նրանք չունեն Սուրբ Հոգի, և դուք գիտեք դա: Մարդկային գանգից արյուն են խմում, պարում, կանչում են սատանային և խոսում են լեզուներով: Անկասկած: Նրանք չունեն Սուրբ Հոգի:

62 Այսպիսով, քանի որ դուք խոսել եք լեզուներով, դա դեռևս չի նշանակում, որ դուք ստացել եք Այն: Միակ միջոցն իմանալու համար, որ դուք ստացել ես Դա, այն է, երբ ձեր հոգին վկայություն է տալիս Նրա Հոգու հետ, և Հոգու պտուղները՝ սերը, հավատքը, ուրախությունը, խաղաղությունը, համբերատարությունը, բարությունը, հեզությունն ու քաղցրությունը հետևում են ձեզ: Ահա թե երբ եք իմանում, որ ստացել եք Սուրբ Հոգին: Նա վկայություն է տալիս Իր մասին:

63 Հիմա, երբ դուք փորձում եք հիմնվել այն փաստի վրա, որ քանի որ պատկանում եք Ասամբլեաներին, կա՛մ մկրտականներին, կա՛մ էլ երիցականներին, գիտե՞ք, թե ինչ եք անում: Ընդունում եք պոռնիկի անունը: Դա միանգամայն ճիշտ է: Դուրս եկեք այդ բանից: Հեռացեք դրանից: Ես նկատի չունեմ ձեր եկեղեցուց կամ որևէ բան. վարվեք այնպես, ինչպես ուզում եք դրա վերաբերյալ: Բայց հեռացեք այդ դիրքից. «Օ՛հ, ես երիցական եմ: Մենք հրաշքների օրերին չենք հավատում»: Ինչո՞ւ չեք հավատում: Աստվածաշունչն է դա սովորեցնում: «Օ՛հ, ես պատկանում եմ Քրիստոսի Եկեղեցուն: Նրանք ասում են, որ հրաշքների ժամանակներն անցել են»: Նրանք սուտ մարգարեներ են:

64 Ես կարող եմ ձեզ ցույց տալ, թե որտեղ է Հիսուս Քրիստոսը իշխանություն տվել Եկեղեցուն բժշկելու հիվանդներին, հարություն տալ մեռելներին և հանել դևերին: Ես մարտահրավեր եմ նետում ցանկացածին, որ սուրբգրային հատված ցույց տա ինձ Աստվածաշնչում, թե որտեղ է Նա վեր առել դա Եկեղեցուց: Ի՞նչն է վեր առել դա: Ձեր սեփական դոգման, ճիշտ է, ոչ թե Աստծո Խոսքը: Սուրբ Հոգին դեռևս կատարում է գործը, և կշարունակի նույն կերպ, և հավիտյան այդպես կանի:

65 Դրա համար մենք հարանվանություն չենք. «Աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունը ուրացել են: Այդպիսիններից ե՛տ քաշվեք»: Մենք նման բաներին չեք հավատում:

66 Հիմա, ինչպե՞ս դա սկսվեց: Մենք պետք է շտապենք և հնարավորինս արագ անցնենք դրան, թե ինչպես դա սկսվեց: Մենք այստեղ մի շարք սուրբգրային համարներ ունենք գրած Սուրբ Հոգու վերաբերյալ:

67 Եվս մի բան. մենք անցած գիշեր մարտահրավեր նետեցինք «սուրբերի համառության» վերաբերյալ, ոչ այն ձևով, ինչպես մկրտականներն են դրան հավատում: Ո՛չ, պարո՛ն: Ես անշուշտ տարբերվում եմ մկրտականներից և իրենց գաղափարից, Կալվինիզմի իրենց տեսությունից: Ես անշուշտ համաձայն չեմ երիցականների հետ: Ես համաձայն չեմ մեթոդականների հետ արմինականների վարդապետության վերաբերյալ: Այո՛, պարո՛ն: Բայց նրանք երկուսն էլ ունեն ճշմարտություն, բայց դուք պետք է վերադառնաք *Այստեղ,* որտեղ Ճշմարտությունն է: Երբ դու վազում ես այնտեղ, խելագարվում ես դրանից: Անկասկած:

68 Եկան մկրտականները, մի քանիսը ցանկացան մկրտվել ջրի մեջ ընկղմումով. և քարոզիչը մկրտում է նրանց, տասից ինքը ծխախոտ են ծխում, դուրս են գալիս, առանձնանում են այնտեղ և թղթախաղ են խաղում, ամբողջ գիշեր խարդախություններ են անում, անառակություն են անում և անարդար գործեր են վարում բիզնեսում. իսկ կանայք կարճատաբատներ են հագնում, վազում են փողոցներով, կտրում են իրենց մազերը, և, և ծխում, շատախոսում, կարուձևի երեկույթներ, և կեղտոտ կատակներ են պատմում: Եվ դուք դա քրիստոնեություն եք անվանո՞ւմ: Եվ դուք կարծում եք, որ հավիտենական ապահովություն ունե՞ք: Այդպես դուք դժոխք եք գնում: Դուք ոչ մի ձև դրախտ չեք ընկնելու: Անկասկած, ո՛չ: Դա հավիտենական ապահովություն չէ:

Բայց երբ մարդը վերստին ծնված է Սուրբ Հոգուց…

69 Իսկ դուք՝ հոգեգալստականներ, քանի որ ցատկել եք, խոսել լեզուներով, շարքերով վեր ու վար եք վազել, դա դեռ չի նշանակում, որ հավիտենական ապահովություն ունեք: Դա երբեք չմտցնեք ձեր գլուխները: Ո՛չ, պարո՛ն: Անշուշտ այդպես չէ: Որովհետև դուք գիտեք, որ ձեր…ձեր կյանքը վկայություն է տալիս ձեր մասին, որ շիտակ չեք

Աստծո հետ: Դա ճիշտ է: Դուք իրավացի չեք: Դա դեռ հավիտենական ապահովություն չէ:

70 Բայց ես ուզում եմ ձեզ մի բան հարցնել: Կա՞ արդյոք հավիտենական ապահովություն: Աստվածաշունչն է այդպես ասում: Աստվածաշունչն ասում է, որ մեր անունները գրվել են Գառան Կյանքի Գրքում մինչև աշխարհի արարումը:

71 Ինչպես ասացի այսօր առավոտյան, նորից կկրկնեմ: Այն մարդը, ով գրել է այս երգը. «Այս երեկո նոր անուն գրվեց Փառքի մեջ և դա իմ անունն է», գաղափարը լավն էր, բայց սուրբգրային տեսանկյունից նա սխալ էր: Ձեր անունը չի տեղադրվել այն երեկո, երբ փրկություն ստացաք:

72 Ձեր անունը, ըստ Աստվածաշնչի, ըստ Հայտնության 13, 17 և այլն «տեղադրվել է այնտեղ մինչև աշխարհի արարումը. և Հիսուս Քրիստոսը մորթվել է աշխարհի հիմնադրումից առաջ»:

73 Ինչպե՞ս կարող էր Աստված, Ով անսահման է, ինչպե՞ս կարող էր անսահման Աստված, իմանալով վերջը հենց սկզբից, ինչպե՞ս կարող էր թույլ տալ, որ մեղքն աշխարհ գա, եթե դա որոշակի պատճառով չլիներ:

74 Պարզապես մեր ասածից մի քանի բաներ ամրապնդելու համար: Ո՞վ հայտնվեց առաջինը՝ Փրկի՞չը, թե՞ մեղավորը: [Ինչ-որ մեկն ասում է. «Փրկիչը»: Ծան. խմբ.]: Փրկիչը, իհարկե: Ո՞վ է ուժեղը՝ Փրկի՞չը, թե՞ մեղավորը: Եթե Փրկիչը կարող է հեռացնել մեղքը, ուրեմն Նա ավելի ուժեղ է: Դե, ինչո՞ւ Նա թույլ տվեց առաջին հերթին, որ մեղքը կատարվի: Ցույց տալու համար, որ Նա Փրկիչ է: Ո՞վ է ուժեղը՝ բուժո՞ղը, թե՞ հիվանդությունը: Բուժողը: Ուրեմն ինչո՞ւ Նա թույլ տվեց, որ հիվանդությունը գա: Որպեսզի ցույց տա, որ Նա էր բուժողը: Ես հենց հիմա ինձ կրոնավոր եմ զգում: Այո՛, պարո՛ն: Ո՛հ, Աստված իմ: Դա Նրա հատկություններն են:

75 Դրա համար է Նա թույլ տալիս, որ դժվարությունները գան: Դրա համար է թույլ տալիս, որ տխրությունը գա, որպեսզի ցույց տա, որ Նա է ուրախությունը: Անկասկած այդպես է: Դրա համար գիշեր կա, ապացուցելու համար, որ կա ցերեկ: Դրա համար զայրույթ կա, ցույց տալու համար, որ կա խաղաղություն: Անշուշտ դա կողմ և դեմ է: Օ՜հ, Նա հիասքանչ է:

76 Հիմա, ինչպե՞ս դա սկսվեց: Մենք անմիջապես հնարավորինս արագ կանցնենք դրան, որպեսզի ամբողջ գիշեր ձեզ չպահեմ: Հիմա, պետք է ամեն ինչի սկիզբ լինի:

77 Ես ուզում եմ ձեզ մի բան հարցնել: Հիմա սա կարող է...Պարզապես պահեք սա ձեր բաճկոնակի գրպանում: Կարիք չկա մշտական ուտեստի հետ մատուցել այն: Բայց լսեք սա:

78 Եթե դուք հավիտենական արարած եք, ուրեմն երբեք սկիզբ չեք ունեցել կամ երբեք չեք կարող վերջ ունենալ: Որովհետև *հավիտենական* բառն առաջացել է «սկիզբ և վերջ չունեցող» բառից:

79 Չէք հիշո՞ւմ: Այսօր առավոտյան ասացի, որ ինչպես Մելքիսեդեկը, երբ հանդիպեց Աբրահամին, ով վերադառնում էր թագավորներին կոտորելուց: Աստվածաշունչն էլ է ասում Եբրայեցիս 7–ում, որ...որ «Ղևին տասանորդ վճարեց Մելքիսեդեկին, երբ նա իր հոր Աբրահամի երանքում էր»: Աբրահամը ծնեց Իսահական, Իսահակը ծնեց Հակոբին, Հակոբը ծնեց Ղևիին: Դա հայր, պապ և նախապապ էր: Եվ մինչ Ղևին նախապապի երանքում էր, Աստվածաշունչը նրան պատվում է Մելքիսեդեկին տասանորդը վճարելու համար: Խոսում եք հավիտենությա՛ն մասին: Ո՛հ, Աստված իմ: Նա երբեք չասաց. «Նա արեց դա ստվերում. նա պոտենցիալորեն արեց դա»: Աստվածաշունչն ասում է. «Նա վճարեց տասանորդը»: Ամեն:

80 Այնուհետև եթե մենք ճիշտ սերմի միջոցով ենք գալիս, երբ Պողոսը քարոզում էր Ավետարանը, ես և դու այնտեղ էինք: Մենք մի րոպեից խորանալու ենք դրա մեջ, կլսենք մեր ականջներով: Ուշադրություն դարձրեք, ահա թե ինչ է Սուրբ Գիրքը մեզ հայտարարում, նույնիսկ այս ժամանակ:

81 Պարզապես մտածե՛ք: Ղևի, հետո Հակոբը՝ իր հայրը, հետո Իսհակը՝ իր հայրը, հետո Աբրահամը՝ իր հայրը. իր նախապապը: Երբ Ղևին իր նախապապի երանքում էր, նա տասանորդը վճարեց Մելքիսեդեկին:

82 Ես ուզում եմ ձեզ հարցնել: Ո՞վ է սա, Հոբ 27....38, երբ Նա ասաց. «Որտե՞ղ էիր դու, երբ Ես դնում էի երկրի հիմքերը: Երբ առավոտյան աստղերը միասին երգում էին, ու Աստծո որդիները ուրախությամբ աղաղակում էին»: Ովքե՞ր էին այդ Աստծո որդիները, որ ուրախությամբ աղաղակում էին: Հիսուսը նրանց ասաց, որ. «Նա

ուրախանում էր ձեզ հետ աշխարհի հիմնադրումից առաջ»: Մենք ժամանակավոր արարածներ չենք: Մենք հավիտենության արածներ ենք:

83 «Ոչ ոք չի կարող գալ Ինձ մոտ, եթե Իմ Հայրը նրան չքաշի: Եվ բոլոր Ինձ մոտ եկողներին Ես կտամ հավիտենական կյանք և հարություն կտամ վերջին օրը: Ոչ ոք չի կարող նրանց Իմ Հոր ձեռքից հափշտակել, Ով նրանց տվել է Ինձ»: Ինչպե՞ս եք դուք կորցնելու:

84 Տեսնում եք, դուք խուճապի եք մատնված: Վախեցած եք: Դուք կվազեք այստեղ ամենուր: Եվ դա լավագույն ապացույցներից մեկն է աշխարհում, որ դուք դեռևս ոչ մի տեղ չեք եղել: Դա ճիշտ է: Ինչպե՞ս Աստված կարող է ձեզ փրկել, եթե Նա…

85 Քանի՞սն այս եկեղեցում ձեռք կբարձացնեն, որ հավատում են, որ Աստված անսահման է: Գիտե՞ք, թե *անսահման* բառն ինչ է նշանակում: Դա պարզապես կատարյալ է: Անսահման, դուք չեք…դուք չեք կարող *անսահման* բառը բացատրել:

86 Վերցրե՞լ եք երբևէ ձեր տեսախցիկը և տեղադրել անսահմանության վրա: Դա պարզապես նշանակում է դրանից հետո: Շատ լավ: Հնարավոր չէ կենտրոնացնել դրա վրա:

87 Ահա թե ինչ է Աստված: Նա անսահման է: Եվ եթե Նա անսահման է, ուրեմն ո՛չ բզեզ, ո՛չ ճանճ, ո՛չ լու, ո՛չ ոջիլ, ո՛չ տիզ, ոչինչ չէր կարող լինել, ինչ որ եղել է երկրի վրա, կամ երբևէ լինելու է, որ Աստված չիմանար դա նույնիսկ մինչև աշխարհի ձևավորվելը: Ահա անսահմանության որոշակի գաղափար:

88 Դե, ուրեմն, անսահման Աստված, Ով այստեղ փրկում է քեզ, իմանալով, որ հաջորդ շաբաթ, կամ հաջորդ ամիս, կամ հաջորդ տարի կորցնելու է քեզ, այսպես Նա խոցում է բուն նշանակետը: Նա չի կարող քեզ կորցնել: «Իմ Խոսքը լսողը և Ինձ ուղարկողին հավատացողը հավիտենական կյանք ունի և դատապարտության չի գա, այլ մահից անցել է դեպի կյանք»: Դա անհնար է: Դուք այլևս…

89 «Ամեն ոք, ով Աստծուց է ծնված, մեղք չի գործում, որովհետև Աստծո սերմը մնում է նրա մեջ. և նա չի կարող մեղք գործել»: Ինչպե՞ս նա կարող է մեղք գործել, երբ իր համար մեղքի ընծա կա:

90 Ինչպե՞ս ես կարող եմ հիվանդ լինել, երբ կատարյալ առողջ վիճակում եմ: Ինչպե՞ս ես կարող եմ կույր լինել,

երբ կարողանում եմ տեսնել: Ո՛հ, Աստված իմ: Ինչպե՞ս ես կարող եմ միաժամանակ և՛ շենքում և՛ շենքից դուրս լինել: Ինչպե՞ս ես կարող եմ միաժամանակ և՛ հարբած և՛ սթափ լինել: Դու չես կարող դա անել:

91 Եվ երբ դուք փրկված եք, Քավության տակ եք, և ձեր մեղքերը ձեզ չեն համարվում: Մի՞թե Դավիթը չասաց. «Երանի այն մարդուն, որի մեղքը Տերը հաշվի չի առնի և մեղք չի համարի»: Աստված մեղքը չի պահում Իր արարածի դեմ: Դա հզոր է: Դա յուղազերծված կաթ չէ, այլ Աստվածաշունչ է: Աստված արդարին մեղքը չի հաշվի:

92 «Աստված,— Իր շնորհքով, նախասահմանության միջոցով, — չի ուզում, որ որևէ մեկը կորսվի, այլ որ ամենքը գան ապաշխարության»: Բայց լինելով անսահման, և իմանալով, թե ով է գալու և ով՝ ոչ, Նա կարողացավ կանխորոշել որ ամեն բան իր կամքին համապատասխան գործի: Եթե Նա չաներ դա, ուրեմն ինչո՞ւ թույլ տվեց մեղքը առաջին հերթին: Երբ Նա Փրկիչ էր...Եթե մեղավոր չլիներ, Նա Փրկիչ չէր լինի. Նրա մեջ եղող հատկությունը չէր կարողան դրսևորվել:

93 Այդ դեպքում ինչպե՞ս Նա բուժող կդառնար: Այդ դեպքում ինչպե՞ս Նա բուժող կդառնար: Որովհետև Նա թույլ տվեց, որ գա հիվանդությունը, որպեսզի կարողանա ցույց տալ Իրեն բժշկող: Նա բժշկող էր: Ինչպե՞ս դուք... Ինչպե՞ս Նա հայտնի կլիներ: Ինչպե՞ս կարող էր Նրա հատկությունն աշխատել: Ինչպե՞ս կարող էր Նա բժշկող լինել, եթե երբեք հիվանդություն չէր եղել: Նա պետք է թույլ տար հիվանդությունը:

94 Զարմանալի չէ, որ Պողոսն ասում է Հռոմեացիս 8-ում. «Հիմար, ո՞վ կարող է բրուտին ասել, թե ինչ անել. ով, երբ է կավը վեր կացել և ասել. «Ինչո՞ւ ես ինձ այսպես ստեղծել»: Մի՞թե Նա Փարավոնին նույն նպատակի համար չբարձրացրեց, որ կարողանա Իր փառքը ցույց տալ Եգիպտոսում: Նա ում կամենում է, խստացնում է և ում կամենում է, արդարացնում է: Այն ո՛չ կամեցողից է, և ո՛չ էլ նրա թափած ճիգից, այլ Աստծուց է, որ ողորմություն է ցույց տալիս»:

95 Այսպիսով, դուք դրա հետ ոչ մի կապ չեք ունեցել: Մեկ բան էլ չեք արել: Եթե դա շնորհք է, եթե դա ձրի պարգև է, դուք չեք կարող որևէ բան անել դրա հետ: Աստված տվել է դա ձեզ, և դա Նրա կամքն է: Դա այն է, ինչ Աստված նախասահմանել է ձեզ համար:

96 Աստվածաշունչն է ասում, որ մենք «նախասահմանված ենք եղել որդեգրության, Աստծո որդիները լինելու աշխարհի հիմնադրումից առաջ»: Ուրեմն, երբ Աստված աշխարհի հիմնադրումից առաջ Իր մտքում մորթեց Գառնուկին՝ Իր հատկությունները հաստատելու համար, թե ինչ է Նա. երբ Գառնուկը մորթվեց, մենք էլ մորթվեցինք Նրա հետ: Երբ Գառան Արյունը բռնվեց Նրա մտքում այնտեղ՝ աշխարհի հիմնադրումից առաջ, այդ ժամանակ իմ ու քո անունները գրվեցին Գրքում, ամենը Նրա մեծ մտքում:

97 Նա անսահման է: Եթե այդպիսին չլիներ, ուրեմն ինչո՞ւ դա թույլ տվեց: Ո՞վ է ուժեղը (ասացի) Փրկի՞չը, թե՞ մեղավորը: Ո՞վ ամենաշատ ուժ ունի: Այս դեպքում ավելի ուժեղը պետք է թույլ տա ավելի փոքրին, և Նա անում է դա միայն Իր փառքի համար: Երբ Աստված ստեղծեց Լուցիֆերին, Նա գիտեր, որ ինքը սատանա կլինի: Նա պետք է թույլ տար դա, որպեսզի ցույց տար, որ Ինքը Փրկիչն է՝ Քրիստոսը: Նա պետք է թույլ տար, որ դա այդպես կատարվեր:

98 Հիմա, մի՞թե Աստվածաշունչը չի ասում, որ. «Ամեն բան բարու գործակից է Աստծուն սիրողների համար»: Ուրեմն ինչի՞ց եք վախենում:

Եկե՛ք համարձակությամբ ելնենք,
Ամեն պայքարի պատրաստ,
Մի՛ եղիր ստրուկ (Պետք է խնդրել և համոզել),
Այլ եղիր հերոս:

99 Ինձ դուր է գալիս դա: Վե՛ր կաց: Փոքրիկ բանաստեղծություն է, որը երեխա ժամանակ ինձ շատ է օգնել, այն մոտավորապես այսպես է հնչում.

Հռոմեական կայսրի օրերում
Ազնվական մի հռոմեացի է լինում,
Ով ամրոցի առջևում
Երկչոտ մի շշնջյուն է լսում.
«Ո՛հ, ապահով է այսպիսի՜ ամրոցում,
Չկա մեկը, որ կարողանա այն ցնցել»:
«Ո՛հ, ո՛չ,— ասում է հերոսը նրան,—
Ես մի միջոց կգտնեմ կամ այն կցնցեմ»:

100 Ահա խնդրեմ: Դա ճիշտ է: Եթե այս Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան…Հեշտ բան չէր, երբ ես այն օր դուրս եկա այս

խորանից, ու բոլորն ինձ ասում էին, որ *սա* կկատարվի և *դա* կկատարվի: «Քեզ ֆանատիկ կհամարեն, բանտ կնետեն և բոլոր բժշկական ընկերությունները քո դեմ դուրս կգան»: Բայց Աստված էր ասել, որ անեմ դա: Աստվածաշունչն է ասում, որ Նա էր: Եվ հիմա արթնության կրակը վառվում է երկնքի տակ եղող բոլոր ազգերի մեջ: Ինչո՞ւ: Ընդիմացե՛ք դրան:

Ինչպե՞ս եք վերաբերվում ձեր աշխատանքին ամեն օր,
Վախենո՞ւմ եք այն աշխատանքից, որ գտնում եք:
Կարո՞ղ եք դիմանալ առաջիկա աշխատանքին
Հոգնած ու դատարկ միտք ունե՞ք (ատում եմ դա)
Կամ դուք ճիշտ եք կանգնում առջևում գտնվող աշխատանքի՞ն,
Թե՞ վախն անցնում է դրա միջով:
Եթե այսպես է, զբաղվեք հաջորդով, որ կգտնեք
Մտածելով, որ անելու եք դա:

101 Մնացեք դրա հետ: Անկասկած: Նպատակ դրեք ձեր սրտում Դանիելի նման: Մնացեք Աստծո հետ:

102 «Այս ամենը որտե՞ղ կատարվեց: Ինչպե՞ս դա տեղի ունեցավ: Ի՞նչն է մարդկանց այդպիսին դարձնում: Ինչո՞ւ ենք մենք ոչնչացման եզրին: Եղբա՛յր Բրանհամ, բացատրեք ինձ: Ինչի՞ց եք ենթադրում, որ ամենը պետք է բնաջինջ լինի»: Նախկինում մի անգամ այն բնաջինջ եղել է, (ճի՞շտ է), նախաջրհեղեղյան ժամանակում: Հիմա այստեղ մի քանի խորը բաներ են գալիս: Եվ մենք կպատրաստվենք ընթերցանության:

103 Այժմ կցանկանայի, որ ինձ հետ բացեիք Ծննդոց գիրքը, 3-րդ գլուխը: Եթե ուզում եք որևէ բան իմանալ, ես կարող եմ ձեզ ցույց տալ Ծննդոց գրքում, թե որտեղ է ամեն պաշտամունք, ամեն «իզմ» և այն ամենը, ինչ մենք ունենք այսօր, սկսվում է Ծննդոցում: Քանի՞սը գիտեն, որ «*Ծննդոց*» բառը նշանակում է «սկիզբ»: Անկասկած:

104 Մենք ամենասկզբում տեսնում ենք Կաթոլիկ եկեղեցին, այն է՝ Բաբելոն, որի հիմնադիրը Ներրովթն էր, մենք այն տեսնում ենք Աստվածաշնչի մեջտեղում և Աստվածաշնչի վերջում, մենք տեսնում ենք... փորձելով բերել կին քարոզիչներին Աստվածաշնչի

սկզբում արմատներից պատրաստված արձանիկներին երկրպագելով: Քանի՞սն են կարդացել Հիսլոպի *«Երկու Բաբելոն»-ը,* պատմությունը: Շատ լավ: Պարզեք դա այդ պատմություններից: Նրանք ունեին կին...Հետո հիշո՞ւմ եք: Նույնիսկ Հակոբը գողացավ իր հոր աստվածներին, և իր աղջիկը թաքցրեց դրանք իր տակ և տարավ իր հետ անապատ, որն ավելի ուշ ապականեց վրանը: Շատ լավ:

105 Եկե՛ք հիմա կարդանք Ծննդոցից.

Արդ, օձն ավելի խորամանկ էր, քան դաշտի բոլոր գազանները, որ Տեր Աստվածն ստեղծել էր. և կնոջն ասաց. «Հիրավի՞ Աստված ասաց, որ պարտեզի ոչ մի ծառից չուտեք»:

...կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից կարող ենք ուտել.

բայց այն ծառի պտղից...պարտեզի մեջտեղում է, Աստված ասաց. «Մի՛ կերեք դրանից և դրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»:

Եվ օձն ասաց կնոջը. «Ամենևին էլ չեք մեռնի:

Այլ Աստված գիտի, որ այն օրը, որ դուք դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն (տեսե՛ք, նոր Լույս է որսում), *և աստվածների պես կլինեք՝ բարին ու չարն իմացող»:*

106 Տեսնո՞ւմ եք, թե ինչպես են այս մարդիկ վարվում այսօր, փորձելով հանել Աստվածաշնչից: «Մի՞թե հեշտ չէ պարզապես ջուր լցնել կամ ջուր ցողել, կամ *այս* կամ *այդ* ձև»: Ո՛չ, պարո՛ն: Աստված ձրագիր է կազմել և հենց դրան մենք պետք է հետևենք, *Սա:*

Եվ երբ կինը տեսավ, որ ծառը լավն էր որպես ուտելիք և թե հաճելի էր աչքին, *և ծառը... ցանկալի է իմաստուն դարձնելու համար, առավ նրա պտղից ու կերավ, և իր հետ իր ամուսնուն էլ տվեց, և նա էլ կերավ:*

Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և հասկացան...մերկ են. և թզենու տերևները կարեցին ու իրենց համար ծածկոցներ շինեցին:

107 Ես կուզեի մի բոպե կանգ առնել այստեղ: Հիմա, ամեն ինչին պետք է սկիզբ լինի: Դուք ունեցել եք սկիզբ: Մենք հիմա...Ահա թե որտեղ եմ ուզում հիմնել ամենը, ինչի մասին մենք խոսեցինք այս երկու հավաքույթների ընթացքում և մինչ այս պահը:

108 Հիմա, այսօր առավոտյան մենք հետ գնացինք և բեմականացրինք Աստվածաշնչում, որ երբ Աստված ստեղծում էր երկիրը, ձևավորում էր գազերը. իսկ հետո այդ գազերը դարձան կալցիում, պոտաշ և, և տարբեր նյութեր: Նա ստեղծում էր ձեր մարմինը: Նա շարում էր իր շենքը վարպետ որմնադիրի պես, կապալառուի նման, ով իր նյութերը դնում է բնակարանը նախագծով կառուցելու համար: Նա շինում էր ձեր մարմինը, և Նա պետք է դա պատրաստեր այնտեղ: Նա Իր մտքում ստույգ գիտեր, թե ինչ պետք է արվեր:

109 *Այս* ձեռքը, Աստված ստեղծեց այս ձեռքը նախքան Նա…մինչ ստեղծում էր աշխարհը. բայց իմ հոգին Նա ստեղծել է մինչ աշխարհի գոյությունը: Հիմա, բայց այս ձեռքը և մարմինը Նա ստեղծեց, երբ աշխարհն էր արարում, որովհետև այս մարմինը հողից է դուրս գալիս և հողին կդառնա: Աստված է այն ստեղծել: Նա այդ ամենը դրել է Իր մեծ նախագծի և ծրագրի մեջ:

110 Հիմա, երբ Նա պատրաստվում էր ստեղծել աշխարհը, Նա ստեղծեց մարդուն, բայց մարդուն ինչ-որ բան պակասում էր: Մենք այսօր ունեցանք դա, անցանք դրամայով, թե ինչպես Հայրն իջավ և նայեց Իր որդուն, ով ստեղծվաց էր Իր պատկերով և այլն: Հետո Նա իր համար կին՝ օգնական, ստեղծեց:

111 Հիմա, հիշեք, որ երկրի բոլոր արարածներին Ադամը անուն դրեց:

112 Նա ստեղծեց անասուններին, կենդանիներին և ամենը: Եվ այսօր մենք…Ժամանակագրողներ և, և գիտության տարբեր մեծ ուղեղներ վեց հազար տարվա ընթացքում փորձել են գտնել այն պակասող օղակը, թե ինչու այդ կենդանին…Մարդը կենդանական կյանք է: Մենք գիտենք, որ, որ մենք…

113 Իսկ կինը պարզապես տղամարդու մասն է, կողմնակի արտադրանք: Կինը սկզբնական արարչագործության մեջ չի եղել: Աստված երկար տարիներ դադարել էր արարելուց, մինչև որ ստեղծեց կնոջը նրա կողից վերցված կողոսկրից: Ադամը բոլոր արարածներին և մնացած ամեն ինչին արդեն տվել էր անուններ, բայց իր համար ոչինչ չգտավ: Այսպիսով, Աստված նրա համար օգնական ստեղծեց. նրա կողից մի կողոսկր վերցրեց, տեղը միս լցրեց և օգնական ստեղծեց նրա համար: Իսկ մարդն իր հոգով միաժամանակ տղամարդ էր և կին:

114 Եվ կինը պարզապես տղամարդու մի մասն է: Եվ երբ տղամարդն իր համար կին է առնում, և եթե նա ճիշտ ընտրված կին է իր համար, Աստծուց տրված կին, նա իր համար կլինի որպես իր մասնիկ:

115 Դրա համար ամուսնության մեջ դուք այնքան շատ տատանումներ ունեք, որովհետև դուրս եք գալիս և գեղեցիկ շագանակագույն կամ կապույտ աչքերով աղջիկ եք տեսնում, կամ նման մի բան, գեղեցիկ կազմվածքով և տարվում եք նրանով: Առաջին երեխային ունենալուց հետո նրա ատամները թափվում են, նա կնճռոտվում և ծերանում է, իսկ հետո դուք ուզում եք վոնդել նրան: Իսկ ձեզանից՝ կանանցից ոմանք գտնում են մի երիտասարդի, լղոզած մազերով, մայրիկի ճարպը կիսով չափ վրան թափված և գանգուր: Այդ ամենը կփլվի: Ես փորձից դա գիտեմ: Բայց ի՞նչ է կատարվում: Ի՞նչ է դա: Դուք տարվում եք դրանով:

116 Նախ դուք պետք է աղոթեք, որովհետև կինը ձեր մասնիկն է: Եվ եթե դուք սեղմել եք կնոջը ձեր կրծքին և կին եք առել նրան ձեզ համար, և դուք...Նա հետք է թողնում ձեր վրա: Այսպես կասենք, որ հասկանաք: Եվ ցանկացած այլ կին ձեր կրծքին չի համապատասխանի այդ պատկերին: Եվ դուք պատասխան եք տալու Աստծուն դրա համար: Պարզապես հիշե՛ք դա:

117 Դուք, որ ուրիշի կնոջն եք հրավիրում և...Ես լսեցի այսօր քաղաքի փոքրիկ աղջկա մասին, խեղճը: Ես նրան ճանաչում եմ: Ինչ–որ խաղամոլ գեղեցիկ հագուստներ է գնում նրան և այլն, և այդպես փորձում է խաղալ նրա հետ: Նման բան անող առնետը նույնիսկ մարդ կոչվելու իրավուք չունի:

118 Գիտեք, շունն այնքան ցածր չի, մինչդեռ մայր շանը «պոռնիկ» եք անվանում: Նա ավելի շատ բարոյականություն ունի, քան Ջեֆերսոնվիլի կանաց կեսը: Դուք մայր խոզին «խոզ» եք անվանում, իսկ նա չունի...Նա շատ ավելի բարոյական է, քան Միացյալ Նահանգների կանայք, նրանցից շատերը: Դա միանգամայն ճիշտ է: Ես գիտեմ, որ դա խիստ է: Իսկ ես ձեզ ասել էի, որ մանրացնելու եմ մինչև վերջ, և ես ուզում եմ, որ դուք իմանաք դա: Եվ դա ճշմարտություն է: Բոլորը՝ մեր օրերի կանայք, նույնիսկ չգիտեն, թե ինչ է բարոյականությունը: Ասում են. «Ինձ ամոտանք մի՛ տվեք»: Դե, դուք ոչ մի ամոթ էլ չունեք: Ուշադրությո՛ւն

դարձրեք: Այո՛, պարո՛ն: Թեև դուք գիտեք, թե որն է ճիշտ և որը՝ սխալ:

119 Հիմա ուշադրությո՛ւն դարձրեք: Այդ մարդը, երբ ստեղծվեց, Աստված առանձրացրեց իր հոգին: Եվ Նա մի մաս վերցրեց մարդուց, իր կողից, և դրանից կին ստեղծեց: Հետո Աստված վերցրեց տղամարդուց նուրբ կանացի հոգին և դրանից կին ստեղծեց: Եվ Նա տղամարդուն դարձրեց առնական, պինդ:

120 Երբ տեսնում եք մի մարդու, ով մի քիչ...գիտեք, մանիկյուր է քսում, կամ ինչպես եք դա անվանում, եղունգները հարդարում է, և, գիտեք, չորսը մի կողմից, հինգը մյուս կողմից, և մազերը լղոզում է, բերանը բաց է պահում, և նմանատիպ բաներ. այս գեղեցիկ տղաներից մեկը: Քո՛ւյր, պարզապես հիշեք, ինչ-որ բան այնպես չէ այդ տարօրինակ անձի հետ: Ինչ-որ բան այնպես չէ: Ավելի լավ է ձեր աչքը նրա վրա պահեք:

121 Եվ երբ տեսնում եք մի կնոջ սիգարետը բերանին, կոմբինիզոն հագած, որ ասում է. «Ես քեզ կասեմ, ախպերս, թե ինչ է սա»: Եղբա՛յր, աչքիդ տակ պահիր այդ ծեր աղջկան: Ինչ-որ բան այնպես չէ նրա հետ:

122 Կինը պետք է կին լինի և կնոջ նման հագնվի: Երբ Աստված ստեղծեց մարդուն, Նա նրան մի բան ստեղծեց, իսկ կնոջը՝ մեկ այլ բան: Եվ երբ Աստված հագցրեց մարդուն, Նա նրան մի ձևով հագցրեց, իսկ կնոջը՝ մեկ այլ ձև: Աստվածաշունչն էլ է ասում. «Կնոջ համար պղծություն է հագնել տղամարդու համար նախատեսված հագուստ»:

123 Իսկ դուք՝ կանաք հագնում եք այդ տաբատները և նման բաներ, և կրում եք դրանք այստեղ, փոքրիկ...Ի՞նչ եք դրանք անվանում. բրիջինե՞ր: Ի՞նչ են դրանք...Ո՛հ, ի՞նչ է դա, որ նրանք...? Չէ, չէ, դրանք կարճատաբատներ չեն, մյուսն է, երկար ոտքեր ունի: [Ինչ-որ մեկն ասում է. «Բրիջի»: Ծան. խմբ.]: Բրիջիներ, արտահագուստներ, կոմբինիզիններ:

Մտնում ես, ասում են. «Սա լեդիների համար է»:

124 Ես ասում եմ. «Ոչ, դուք սխալվում եք: Լեդիներն այդ բաները չեն հագնում: Կանայք գուցե և, բայց ոչ լեդիները»: Դա ճիշտ է:

125 Աստվածաշունչն է ասում. «Կնոջ համար պղծություն է հագնել հագուստ...և տղամարդուն հագնել կնոջ համար նախատեսված հագուստ»:

126 Տղամարդիկ օր օրի ավելի են նմանվում կանանց, իսկ կանայք՝ տղամարդկանց: Ի՞նչն է բանը: Մենք մի քանի րոպեից կպարզենք դա Աստվածաշնչով: Կանայք այլևս կանայք չեն: Ես ձեզ նկատի չունեմ՝ քրիստոնյա կանայք: Ես խոսում եմ ընդհանրապես: Նրանք ուզում են տղամարդկանց նման վարվել. ուզում են տղամարդու նման կտրել իրենց մազերը. ձեռքերն *այդպես* դնեն բարի վաճառասեղանին և ծխախոտը բերանի անկյունում երգեն՝ *Աստված օրհնի Ամերիկան:*

127 Վարեք ճանապարհով, ինչ-որ հեռավորության վրա և նույնիսկ մայրուղով: Մենք հաշվել ենք...Ես ուզում եմ ձեզ մի բան ասել: Իսկ դուք՝ կին վարորդներ, լսեք: Բիլլի Փոլն ու ես այս վերջին ընկերակցության ժամանակ վեց ամիս երկրով, ես հաշվել եմ, թե ճանապարհային քանի խախտումներ են լինում: Եվ ճանապարհային երեք հարյուր խախտումերից, գուշակեք, թե դրանից քանի՞սն էին կին վարորդներ: Պակասում էր միայն... Նրանցից տասնինները տղամարդիկ էին: Իսկ երկու հարյուր ութսունը, թե կարծեմ երկու հարյուր ութսուն մեկը կին վարորդներն էին: Կի՛ն վարորդներ: Ես չեմ ասում, որ լավ կին վարորդներ չկան: Բայց նա ամեն պահի կարող է շրջվել:

128 Եվ դուք կփորձե՞ք պատժել իրեն: Նամանավանդ եթե նա հաճելի արտաքինով կկանգնի այնտեղ, կուղի իր մազերը, երբ մոտենում է ոստիկանը: «Դե,— կասի ոստիկանը,— իհարկե, դուք եք սխալ»: Հը՛մ: Մեզ մոտ ոչ մի օրենք չի գործում:

129 Նրանք վերջերս հաստատեցին դա հարկային հայցի ժամանակ, ինչի միջով ես վերջերս անցա: Մեզ մոտ ոչ մի օրենք չի գործում: Եթե կան...

130 Զարմանալի չէ, որ Անգլիայի հայտնի լորդներն ասել են. «Ժողովրդավարությունն անխարիսխ նավարկություն է»: Դա ճիշտ է, կանգնած հարթակի վրա, նախընտրական քարոզչություն: Ժողովրդավարությունը փտած է, բռնապետներն էլ և մնացածը: Ամբողջը փտած է: Աստծուն միայն մեկ բան է մնում անել՝ ոչնչացնել ամենը, ինչպես որ Նա ասել էր, թե կանի, և նորից սկսել: Հիմա տեսեք, թե դուք որքան մոտ եք Գալուստին:

131 Հիմա երբ այս կինը...Նա նրա համար օգնական ստեղծեց, և նա պետք է իր օգնականը լիներ: Իսկ հետո...

132 Հիմա, ես դեռ չեմ հանդիպել այստեղ մի քարոզչի,

ով համաձայն լինի սրա հետ: Նրանք փորձում են այլ կերպ դա ներկայացնել, բայց ես դրա մեջ ոչ մի իմաստ չեմ տեսնում: Նրանք ուզում են ասել, որ Ադամն ու Եվան խնձորներ են կերել: Եղբա՛յր, եթե...Ես կատակի համար չեմ ասում սա, բայց ահա թե ինչ եմ ուզում ասել: Որովհետև եթե խնձոր ուտելով կանայք գիտակցում են, որ մերկ են, ապա ավելի լավ է նորից խնձորներ բաժանենք: Եվ դուք գիտեք, որ դա ճիշտ է:

133 Դուք գիտեք, որ այն, ինչ նրանք արեցին, խնձոր ուտելը չէր, որ մղեց նրանց գիտակցել, որ իրենք մերկ են: Անշուշտ, դա չէր: Դա պետք է սեքսական ձևով գար: Դա պետք է լիներ, որովհետև նրանք գիտակցեցին, որ մերկ են, երբ արգելվաց պտուղն առան: Մի՞թե կինը պտղատու ծառ չէ: Մի՞թե դուք ձեր մոր պտուղը չեք: Դա էր այն պտուղը, որ արգելված էր ուտել:

134 Այստեղ հիմա մի մեծ բան: Հիմա գիտությունն ամենամոտն է նրան, որ երբևէ հասցրել է իմանալ, թե մարդն ինչ է եղել...Նրանք փորում են հին ոսկորներ, վերցնում են մնացորդներ, գլուխներ, գանգեր, ձեռքեր, ոսկորներ և փորձում են դրանք նմանեցնել մարդուն: Եվ նրանք գիտեն, որ մարդուն ամենամոտը՝ նրա կողքին, շիմպանզեն է: Նա մարդուն ամենամոտ տեսակն է, մինչդեռ, այնուամենայնիվ, ոչ մի կապ չունի մարդու հետ՝ բարձրագույնի:

135 Կյանքի ցածրագույն ձևը, որ գոյություն ունի, գորտն է, բարձրագույն ձևը՝ մարդը: Աստված սկսեց հիմքից և բարձրացավ մինչև վերև, մինչև որ հասցրեց Իր պատկերին: Ստեղծեց թռչուններ և կենդանիներ և ավելի բարձր, մինչև որ հասավ Աստծո պատկերին: Նա մարդուն ստեղծեց այդ պատկերով: Դա բարձրագույն ձևն է: Ցածրագույն ձևը շերեփուկն է, որը վերածվեց գորտի և այլն:

136 Հիմա, այս պակասող օղակը, որ նրանք չեն կարողանում գտնել: Հիմա հետևեք Սուրբ Գրքին: Դուք, ձեզանից շատերը, չեն համաձայնվի սրա հետ, բայց ես ուզում եմ...պարզապես ուզում եմ, որ պահեք սա ձեր մտքում: Մի՛ վերաբերվեք սրան կանխակալ: Լսեք:

137 Ես գիտեմ, որ ձեզանից շատերը լսել են դոկտոր Դեհանին: Ես անշուշտ...Ես անշուշտ գնահատում եմ նրան որպես նման տրամաչափի մարդ և լավ մկրտական եղբայր: Նա ավելի շատ բանականություն և ուղեղ ունի, և, և մոռացել է ավելին, քան ես երբևէ իմացել

եմ, որովհետև նա աստվածաբության, բժշկության և գիտության դոկտոր է: Նա խելացի մարդ է: Բայց նա ասում է, որ այդ...Երբ Աստծո որդիները տեսան, որ մարդկանց աղջիկները գեղեցիկ են. նա վերցնում է Հովսեփոսի տեսակետը և ասում է, որ «նրանք...նրանք խցկվեցին մարդկային մարմնի մեջ», և իրենց համար կին վերցրեցին: Եվ այնտեղ Նայիդ երկրում հսկաներ էին ապրում: «Եվ նրանք իրենց համար կին առան և ապրեցին նրանց հետ, երբ Աստծո որդիները՝ ընկած հրեշտակները, առան և տեսան մարդկանց աղջիկներին. սեռական ցանկությունն այդքան մեծ էր, և դեռևս անկումից հետո մեղանչական լինելով, նրանք խցկվեցին մարդկային մարմնի մեջ»:

138 Եթե նրանք անեին դա, ապա ապականում են աստվածային բժշկությունը և մնացածը: Եթե սատանան կարող է արարել, ուրեմն Աստծուն հավասար է: Սատանան չի կարող արարել: Ես ուզում եմ, որ ցույց տաք ինձ մի տեղ, որտեղ սատանան կարող է արարել: Նա չի կարող արարել: Նա միայն աղավաղում է այն, ինչ արդեն ստեղծված է: Նա արարիչ չէ: Նա միայն աղավաղող է:

139 Դե, հետո ի՞նչ կատարվեց: Նայեք: Ահա իմ տարբերակը: Ահա պակասող օղակը:

140 Նրանք հիմա ունեն շիմպանզե, բայց դուք չեք կարող շիմպանզեին կնոջ հետ խաչասերել և երեխա ծնել: Դուք չեք կարող մարդուն խաչասերել որևէ կենդանու հետ: Դա չի խառնվի: Դուք չեք կարող որևէ կենդանուց արյան փոխներարկում կատարել:

141 Երբ ես Աֆրիկայում էի, նրանք այդ ձևով էին վարվում այդ խեղճ սևամորթների հետ. ինչ–որ մեկն ինչ ասաց. «Նրանք ոչ այլ ինչ, քան կենդանիներ են»:

142 Ես ասացի. «Ես ներողություն են խնդրում: Նրանք նույնքան մարդ են, որքան և դուք, գուցե և ավելին»: Թո՛ւյլ տվեք ձեզ ասել, երբ դուք նման հատկություն եք ձեռք բերում, կենդանու մակարդակին եք իջնում: Ես ասացի. «Այդ մարդը, եթե ղառի տուզի պես սև է, կա՛մ դդմի պես դեղին է, կա՛մ լեղակի պես կապույտ է, նա կարող է արյուն տալով փրկել ձեր կյանքը: Բայց դուք չեք կարող կենդանու արյունը ներարկել ձեր մեջ»: Անշուշտ, նա մարդ է:

143 Պարզապես նրա համար, որ մեկի մաշկը սև է, իսկ մյուսինը՝ շագանակագույն, ուրիշինը՝ դեղին է, իսկ մեկ

ուրիշինը՝ սպիտակ, դա դրա հետ ոչ մի կապ չունի: Աստվածաշունչն ասում է. «Աստված մեկ արյունից է ստեղծել բոլոր ազգերին»: Եվ դա միանգամայն ճիշտ է: Մեր ապրելու վայրերն են փոխում մեր մաշկի գույնը, դա դրա հետ ոչ մի կապ չունի: Աստված մեկ…մեկ մարդուց ստեղծեց բոլոր ազգերին, մեկ արյունից, բոլոր ազգերը նույնն են:

144 Չինացիները. սպիտակամորթը չի կարող հիմա ասել, սևամորթը չի կարող հիմա ասել, որ. «Այդ չինացին, նա, նա դեղնամորթ է, ես չեմ ուզում նրա հետ ոչ մի կապ ունենալ»: Նա քո եղբայրն է: Դու էլ՝ սպիտակամորթ մարդ, մի՛ ասա դեղնամորթին կամ սևամորթին, ոչ մեկին, ոչ էլ մյուսին. «Ես քո հետ ոչ մի կապ չունեմ»: Նա քո եղբայրն է: Միանգամայն ճիշտ է:

145 Հիմա ուշադրություն դարձրեք, ահա թե ինչ տեղի ունեցավ: Ես հավատում եմ և կարող եմ հիմնավորել դա Աստվածաշնչով, որ օձն էր, որ արեց դա: Օձն է շիմպանզեի և մարդու միջև այդ բացակայող անձնավորությունը: Որովհետև լսեք, ուշադրություն դարձրեք հիմա սրան, որ օձը սողուն չէր: Նա դաշտի բոլոր գազաններից ամենա «խորամանկն էր»:

146 Հիմա, ես այսօր գնացել և ամեն տեղից բարառաններ են գտել, որ փնտրեմ այս բառը, թե *խորամանկ* բառն ինչ է նշանակում: Դա նշանակում է «խելացի, հմուտ լինել» և եբրայերենի լավագույն մեկնաբանությունը (մ-ա-հ-ա-հ-ից, մահահ) նշանակում է «կյանքի սկզբունքների մասին իրական գիտություն ունեցող»:

147 Հիմա մի պահ նայենք սրան: Նա խելացի և հմուտ է, մինչդեռ «օձ է» կոչվում: Սակայն հիշեք, նա եղածների մեջ ամենախելացին էր, և ավելի նման էր մարդուն, քան ինչ-որ մի բան, որ կար դաշտում. ամենամոտն էր մարդուն: Նա սողուն չէր: Անեծքը նրան սողուն դարձրեց: Եվ նա…Աստվածաշունչն ասում է, որ նա բոլորից ամենագեղեցիկն էր:

148 Նույնիսկ անեծքը չվերացրեց նրա ողջ գեղեցկությունը. դեռևս օձի փառահեղ գույները գեղեցիկ են, և նրա գրավչությունն ու խորաթափանցությունը: Նույնիսկ անեծքը չվերացրեց դա: Բայց դուք հիշում եք, Աստված նրան ասաց, որ նրա ոտքերը կվերանան և նա իր փորի վրա կսողա: Դուք օձի մեջ չեք կարողանա գտնել մի ոսկոր, որը նման լինի մարդու ոսկորին, դրա համար է գիտություն մոլորվել: Բայց ահա, թե որտեղ է նա:

149 Աստված ծածկել է դա իմաստունների ու գիտունների աչքերից և խոստացել է հայտնել դա Աստծո որդիներին վերջին օրերին, երբ Աստծո որդիները հայտնի կդառնան, երբ «Աստծո որդիները, որոնք ուրախանում էին դեռևս աշխարհի հիմնադրումից առաջ»: Երբ Աստվածության և մնացած բաների մեծ հայտնությունն իջնի վերջին օրերին, Նա կհայտնի այս բաները Աստծո որդիների միջոցով: Դուք գիտեք, որ Սուրբ Գիրքը սովորեցնում է այդ: Եվ ահա մենք այստեղ ենք: Դրա համար է Աստված այս բաները մեզ բացում: Աստված հայտնում է Իր որդիներին: Նա գնում է մարդկային գիտելիքների սահմաններից այն կողմ՝ հոգևոր հայտնությունների մեջ, և հայտնում է դա: Չե՞նք սովորեցրել այս Աստվածաշնչում. «Այստեղ է իմաստություն ունեցողի համար»: Ոչ թե այն, ինչ նա սովորել է ինչ-որ ճեմարանում, այլ ինչ սովորել է ծնկների վրա Աստծո առջև, և ինչ որ Աստված հաճեցել է տալ իրեն: Աստծո որդիները, հայտնվա՜ծ:

150 Ահա օձը, ահա թե ինչ էր օձը. ես ձեզ կտամ նրա իմ նկարագրությունը:

151 Մենք ունենք...իջնում ենք գորտից մինչև այդ շերեփուկը և ավելին՝ մինչև *այս և այն,* մինչև ի վերջո հասնում եք կապիկին՝ շիմպանզեին: Եվ շիմպանզեից, մենք հիմա շիմպանզեից ցատկում ենք մարդուն, և զարմանում ենք, թե ինչու:

152 «Դե,— ասում է գիտությունը,— սպասեք: Կարող ենք կնոջը խաչասերել կապիկի և շիմպանզեի հետ, և ընդհակառակը, տղամարդուն խաչասերել շիմպանզեի հետ»: Դա չի գործի: Խաչասերեք այն ցանկացած այլ կենդանու հետ. դա չի գործի: Արյունը չի խառնվի. վերցրեք ձեր արյունը, դա լրիվ տարբեր արյուն է, լրիվ:

153 Այստեղ դրանց միջև որոշակի արյուն կա, և նրանք չեն կարողանում գտնել այդ կենդանուն: Ո՛հ, ալելույա, ես հենց հիմա սկսում եմ ինձ կրոնավոր զգալ: Ուշադրությո՛ւն դարձրեք: Ինչո՞ւ: Աստված ծածկել է դա նրանցից: Օձի մեջ չկա մի ոսկոր, որը նման լինի մարդու ոսկորին: Աստված այդքան հեռու է դա տեղադրել, որ հնարավոր չէ բացահայտել դա խելացի մարդկանց միջոցով:

154 Եվ ամեն դեպքում ես ձեզ ցույց կտամ, թե որտեղից է այդ խելացի մարդը սերվում, որտեղ, որտեղ է նա: Հասկանում եք, նա չի կարող գա դրա միջոցով:

155 Դա պետք է հայտնության միջոցով գա. «Դու ես Քրիստոսը...Որդին»: «Այս վեմի վրա Ես կշինեմ Իմ Եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան», հոգևոր հայտնություն: Ինչպե՞ս...ինչպե՞ս Աբելն իմացավ, որ պետք է գառ մատուցեր, ի տարբերություն Կայենի, ով դաշտի պտուղներից զոհ մատուցեց: Դա հոգևորապես հայտնված էր իրեն: Դուք դա ճեմարանի միջոցով չեք ստանում: Դուք դա հարանվանությունների միջոցով չեք ստանում: Դուք ստանում եք դա Երկնքից:

156 Հիմա նայե՛ք օձին, այս օձին որ առաջինն էր: Եկե՛ք հիմա նկարենք նրա պատկերը: Նա հսկա է: Նա շիմպանզեի և մարդու մեջտեղում է գտնվում: Եվ օձը. սատանան՝ Լուցիֆերը, գիտեր, որ դա միակ արյունն էր, որ կարող էր խառնվել մարդկային արյան հետ, միակ անձն էր, որին նա կարող էր օգտագործել: Նա չէր կարող օգտագործել շիմպանզեին, այդ արյունը չէր խառնվի: Նա չէր կարող տարբեր բաներին օգտագործել: Նա չէր կարող ոչխարներին, ձիերին, ցանկացած այլ կենդանու օգտագործել, նա պետք է այս օձին օգտագործեր:

157 Եկե՛ք հիմա վերցնենք և տեսնենք, թե ինչին է նման նա: Նա մեծ հսկա է, նախապատմական հսկա: Ահա թե որտեղից են նրանք այս մեծ ոսկորները գտնում, և ես ցույց կտամ ձեզ սա Աստվածաշնչում: Հիմա ուշադիր նայեք: Լավ: Այս հսկան, ասենք նրա...նրա հասակը տաս ֆունտ էր՝ մեծ ուսերով էր, նման էր մարդուն: Եվ նրա արյունը, սողուն դառնալուց հետո, կենդանուց կենդանի համնկնում է. դուք կարող եք խաչասերել կենդանիներին. և դա շարունակում է ավելի բարձր արյուն լինել, կյանքի ավելի բարձր ձև, մինչև բարձրանում է մարդու տիրույթ: Բայց այստեղ վերջին կապը՝ նրանց միջև, կտրվեց: Քանի՞սը գիտեն, որ գիտությունը չի կարող գտնել այդ պակասող օղակը: Բոլորդ էլ դա գիտեք: Ինչո՞ւ: Ահա նա, օձը: Ահա նա էր, մեծ հսկան:

Եվ սատանան իջնում է և ասում է. «Ես կարող եմ ներշնչել»:

158 Հիմա, երբ դուք գնում եք նայելու կանանց և կանացի ելույթներին, հիշեք՝ դուք օծված եք սատանայից (և դա ձեր կինը չէ):

159 Ուշադրություն դարձրեք, սատանան իջավ և մտավ օձի մեջ: Եվ նա Եվային գտավ մերկ Եդեմի պարտեզում, և խոսեց մեջտեղի պտղի մասին: *Մեջտեղն* բառը նշանակում է «մեջտեղի մասում», և այլն. հասկանում

եք, խառը լսարանում: Եվ օձն ասաց. «Սա հաճելի է: Ակնահաճո է»: Ի՞նչ արեց նա: Սկսեց սիրով զբաղվել Եվայի հետ, և ապրեց նրա հետ որպես ամուսին:

160 Եվ նա տեսավ, որ դա հաճելի է, գնաց և պատմեց իր ամուսնուն, բայց նա արդեն հղիացել էր սատանայից:

161 Եվ նա ծնեց իր առաջին որդուն, որի անունը Կայեն էր, սատանայի որդի:

«Հիմա,— դուք ասում եք,— դա սխալ է»:

162 Շատ լավ, մենք կպարզենք, թե արդյոք դա սխալ է, թե ոչ: *«Եվ Ես թշնամություն եմ դնելու քո Սերնդի և օձի սերնդի միջև»:* Ի՞նչ: Օձի՛ սերունդ: Կինը Սերունդ ուներ, և օձն էլ սերունդ ուներ: *«Եվ Նա քո գլուխն է ջախջախելու, իսկ դու Նրա գարշապարն ես խայթելու»:* Այնտեղ *ջաղջախել* բառը նշանակում է «քավություն անել»: Ահա ձեզ օձի «սերունդը»:

Հիմա, ուշադրություն դարձրեք, այստեղ ի հայտ են գալիս երկու տղամարդիկ:

163 Հիմա, այս օձը, երբ նա կանգնեց այնտեղ, այս մեծ հսկայական մարդը կանգնեց այնտեղ, նա մեղավոր էր Ադամի կնոջ հետ շնություն գործելու մեջ: Որտե՞ղ է գտնվում մեղքն այսօր: Ի՞նչն է իրողությունները դարձնում այնպիսին, ինչպիսին են այսօր: Հիմա, ես…ես… Անշուշտ դուք ըմբռնում եք, թե ինչի մասին եմ խոսում: Եվ այնտեղ դա եղել է:

Եվ երբ նա այդ բանն արեց, Աստված ասաց, սկսեց կանչել Ադամին ու Եվային:

Եվ նա ասաց. «Ես մերկ էի»:

Եվ Աստված ասաց. «Ո՞վ ասաց քեզ, թե դու մերկ ես»:

164 Հետո նրանք սկսեցին՝ բանակի ոճով՝ իրար վրա կրակել: Ասաց. «Այն կինը, որ ինձ տվեցիր, արեց դա: Նա՛ ինձ համոզեց»:

165 Իսկ կինն ասաց. «Օձն ինձ խնձո՞ր տվեց»: Լավ, քարոզիչ, ուշքի արի:

166 Նա ասաց. «Օձն ինձ խաբեց»: Գիտե՞ք, թե ի՞նչ է նշանակում *խաբել:* Նշանակում է՝ «կուսությունից զրկել»: Նա…օ-…սատանան երբեք նրան խնձոր չի տվել: «Օձն ինձ խաբեց»:

Եվ հետո եկավ անեծքը:

167 Նա ասաց. «Քանի որ դու լսեցիր օձին՝ քո ամուսնուն լսելու փոխարեն, դու Կյանքը վեր առար աշխարհից: Խիստ շատանալու են քո, քո ցավերը. և քո հղիությունը քո ամուսնուց է լինելու» և այլն:

168 «Քանի որ դու լսեցիր կնոջդ՝ Ինձ լսելու փոխարեն (Ես հողից էի քեզ վերցրել. բարձրագույն տեսակը), հետ դառնաս դեպի հողը»:

169 «Եվ օ՛ձ, քանի որ այս բանն արեցիր, քո ոտքերը կվերանան: Փորի՛դ վրա սողաս կյանքիդ բոլոր օրերում: Եվ դու ատելի լինես: Եվ հողը լինի քո կերակուրը»: Ահա խնդրեմ: Ահա այդ պակասող օղակը:

170 Հիմա այստեղ հայտնվում է Կայենը: Եկե՛ք հետևենք բնություններին: Ահա գալիս է Կայենը: Ո՞վ է նա: Խորաթափանց գործարար: Նա դաշտեր է մշակում: Խելացի է, ինտելեկտուալ. կրոնասեր է, շատ կրոնասեր. հետևեք նրա, հետևեք հիմա նրա հատկություններին: Պարզապես մի քանի րոպե ինձ հետ ավելի երկար շարժվեք:

171 Ահա նա հայտնվում է: Նա գիտի, որ ինքը բարոյական է: Նա ուզում է գնալ եկեղեցի: Նա իր համար եկեղեցի է շինում, զոհ է մատուցում: Զոհասեղան է պատրաստում և ամենը: Զոհասեղան է պատրաստում, դնում է իր ծաղիկները դրա վրա: Դնում է դաշտի...դաշտի պտուղները, մատուցում է դրանք Աստծուն: Ասում է. «Ահա, Տե՛ր: Ես գիտեմ, որ մենք խնձորներ ենք կերել, ահա թե ինչն է եղել դրա պատճառը»: Նրա ճյուղավորումներից մի քանիսը նույն տեսակի գաղափարն ունեն: Ցույց է տալիս, թե որտեղից է դա գալիս: Դաշտից բերում է իր խնձորները, դնում է դրանք այնտեղ և ասում է. «Սա քավություն կանի»:

Աստված ասել էր. «Դա խնձորներ չէին»:

172 Բայց Աբելը հոգևոր հայտության միջոցով գիտեր, որ դա արյուն էր: Նա գառ բերեց, վիզը կտրեց, և այն մահացավ:

173 Եվ Աստված ասաց. «Դա ճիշտ է: Ահա թե ինչն արեց այդ: Դա արյուն էր»: Դուք գիտեք, թե ինչ արյան մասին եմ խոսում: Շատ լավ: «Արյունն էր, որ դա արեց»:

174 Այժմ նայե՛ք: Իսկ հետո, երբ Կայենը տեսավ, որ իր սուրբ թռչկոտող եղբայրը ընդունվեց Աստծո առջև, և նշաններ ու հրաշքներն էին կատարվում այնտեղ, նախանձեց նրան: Նա ասաց. «Մենք հենց հիմա վերջ

կդնենք այս անհեթեթությանը»: Նայեք նրա եղբայրներին, նայեք նրա այսօրվա երեխաներին: «Ես նրանից ավելի խելացի եմ», դրա համար զայրացավ: Որտեղի՞ց *զայրույթը* եկավ: Ուզո՞ւմ եք ասել զայրույթը...? Նա սպանեց իր եղբորը: Նա մարդասպան էր:

175 Կարո՞ղ եք Աստծուն մարդասպան անվանել: Իսկ Ադամն Աստծո որդին էր: Աստվածաշունչն է ասում, որ՝ «Ադամն Աստծո որդին էր», այդ մաքուր սկիզբը դեռ այնտեղ էր: Ադամն Աստծո որդին էր: Եվ այդ նախանձությունը, չարությունը և այլն, չէին կարող այդ մաքուր աղբյուրից հոսել:

176 Դա պետք է ուրիշ տեղից գար: [Չձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. խմբ.]: Եվ դա սատանայի միջոցով եկավ, ով հենց սկզբից էլ մարդասպան էր: Աստվածաշունչն է ասում. «Նա հենց սկզբից էլ սուտասան և մարդասպան էր»: Ահա այն, խնդրեմ: Եվ նա սպանեց իր եղբորը:

177 Դա Քրիստոսի մահվան խորհրդապատկերն էր: Այնուհետև՝ դրանից հետո, Աստված վեր հանեց Սեթին՝ նրա տեղը զբաղեցնելու համար: Քրիստոսի մահը, թաղումն ու հարությունը:

178 Տեսեք, հետո, այստեղ են հայտնվում հսկաները: Այնուհետև Կայենը գնում է Նայիդ երկիր: Եթե նրա հայրը մեծ հսկա է եղել, ուրեմն Կայենը ո՞ւմ նման պետք է լիներ: Հորը: Եվ նա գնաց Նայիդ երկիր և իր քույրերից մեկին առավ:

179 Միակ ձևը, որ նա կարող էր անել: Այնտեղ ուրիշ կանայք չէին կարող լինել, եթե ոչ Եվայի միջոցով: Ասում են, որ նրանք յոթանասուն տղաներ և աղջիկներ են ունեցել: Եթե, եթե ոչ մի կին չի եղել...Աստվածաշունչը աղջիկների ծնունդը չի գրանցում, այլ միայն տղաներինը: Եվ երբ...եթե Եվայից բացի ուրիշ կանայք չեն եղել, ուրեմն երբ նա մահացավ, մարդկային ցեղը պետք է դադարեր գոյություն ունենալ: Նա պետք է աղջիկներ ունենար: Եվ Կայենը պետք է ամուսնանար իր սեփական քրոջ հետ:

180 Նա Նայիդ երկիրը գնաց, և...և իր համար կին գտավ: Եվ երբ նա ամուսնացավ նրա հետ այնտեղ, ահա թե որտեղ գտնվեցին այդ մեծ հսկաները, որոնք Աստծո ընկած որդիներն էին. ովքեր եկել էին իրենց հոր, սատանայի, Կայենի միջոցով: Ահա ձեր բացակայող օղակը:

181 Հետևե՛ք օձի սերմին: Այժմ նայե՛ք: Հիշե՛ք, օձի սերմը կրոնասեր է: Նայեք այն հիմա սկսում է շարժվել, մի քանի րոպեյով: Ահա այն գնում է, օձի սերմը: Ի՞նչ տեղի ունեցավ նրանց հետ: Թո՛ւյլ տվեք հիմա այստեղ մի բան կարդալ, ես դա այսօր եմ գրի առել:

182 Ի՞նչ է գալիս Աբելի գծով: Լսե՛ք սա: Շատ լավ: Գալիս է Աբելը: Աբելից հետո գալիս է Սեթը: Սեթից հետո գալիս է Նոյը: Նոյից հետո գալիս է Սեմը: Սեմից հետո գալիս է Աբրահամը: Աբրահամից հետո գալիս է Իսահամը: Իսահակից հետո գալիս է Հակոբը: Հակոբից հետո գալիս է Հուդան: Հուդայից հետո գալիս է Դավիթը: Դավիթից հետո գալիս է Քրիստոսը, դեպի կատարելություն:

183 Տեսեք, թե Աստծո Հոգին ինչպես էր ապրում Աբելի մեջ: Տեսեք, թե Այն ինչպես էր ապրում Սեթի մեջ: Տեսեք, թե Այն ինչպես էր ապրում Հուդայի մեջ: Տեսեք, թե Այն ինչպես էր ապրում Դավիթի մեջ: Նայեք այդ ամբողջ ընթացքում նույն Հոգին աղաղակում է այդ արդար սերմի միջոցով: Կարևոր չէ, թե նրանք ինչ են արել, նրանք նախասահմանված էին:

184 Նայեք Հակոբին, կեղտոտ...Ես սա սրբապղծության ձևով չեմ ասում: Բայց Հակոբը, մի քիչ ամաչկոտ, անընդհատ մոր փեշից կախված, շուրջն էր վազում, փոքրիկ փափկասուն տղա: Մոր ճնշումով նա գնաց և խաբեց իր հորը, որպեսզի օրհնությունը ստանա. բայց դա իրեն տրվել էր աշխարհի հիմնադրումից առաջ: Անկասկած, տրված էր:

185 Գնաց Խառան և խաբեց իր աներոջը, բծավոր փայտեր, բարդիների փայտիկներ վերցրեց և դրեց ջրի մեջ, որպեսզի այդ անասունները բեղնավորվելիս վախենան և խայտաբղետ անասուններ ծնեն. որ կարողանա խաբել և տիրանալ այդ հոտին: Աստված դրանում օրհնեց նրան: Դա ճիշտ է:

186 Վա՜յ նրան, ով որևէ բան ասի Հակոբի դեմ: Դուք գիտեք, թե ինչ...դուք գիտեք, թե սուտ մարգարեն ինչ ասաց...Ավելի ճիշտ, նա ճիշտ էր մարգարեանում: Բաղաամն ասաց. «Նրան օրհնողը օրհնյալ կլինի, նրան անիծողը անիծյալ կլինի»:

187 «Ես վերցրեցի քեզ, Հակոբ: Ես նրան գտա ինչպես... ինչպես օտար երկրում: Եվ ինչպես արծիվն է խառնում իր բույնը, ես էլ խառնեցի նրան և հանեցի նրան»: Ալելո՜ւյա:

«Ո՛չ թե զորությունով, ո՛չ թե ուժով, այլ իմ Հոգով»,— ասում է Տերը։

188 Տեսե՛ք, ինչպես դա հասավ կատարելության։ Այդ Հոգին կատարելապես գործում էր Քրիստոսի մեջ, յուրաքանչյուր պատրիարքի միջոցով, անմիջապես իջնելով։ Կարևոր չէ, թե նրանք ինչ էին արել, թե ինչ էին ասել, թե ինչ էին արել, նրանք բացարձակապես արդարության սերմ էին։

189 Եվ այստեղ, երբ արդար Աբրահամը…Փա՜ռք։ Ո՛հ, ես ինձ պարզապես կրոնավոր եմ զգում։ Երբ արդար Աբրահամը հանդիպեց Մելքիսեդեկին, Ով Աստված Ինքն էր։

190 Ո՞վ էր Մելքիսեդեկը։ «Սաղեմի թագավոր, որը Երուսաղեմի, խաղաղության Թագավորն է։ Նա հայր չի ունեցել, մայր չի ունեցել։ Ո՛չ օրերի սկիզբ է ունեցել և ո՛չ էլ կյանքի վերջ»։ Ով էլ որ լինի, Նա դեռևս կենդանի է։ «Նա երբեք չի ծնվել։ Երբեք էլ չի մահանա։ Նա անհայր, անմայր է։ Ո՛չ օրերի սկիզբ է ունեցել, ո՛չ էլ կյանքի վերջ»։ Ասեք ինձ, թե Ով էր Նա։ Հավիտենական Աստված, որում մենք կոչում ենք…

191 Ո՛հ, մոռացել եմ, թե ինչպես է դա կոչվում։ Թեոֆանիա, ահա թե ինչ է սա։ Պարզապես ինչպես…Առասպել չէ. բայց և այնպես մի բան է, որ հայտնվեց։ Ինչպես Աբրահամի մոտ եկավ այնտեղ՝ վրանում, հրեշտակի տեսքով, և մարգարեացավ ու ասաց Սառային, որ նա Իր հետևում կանգնած ծիծաղեց և այլն։ Հենց այդ է, նույն բանը։

192 Եվ այստեղ Նա էր։ Նա հանդպպեց Մելքիսեդեկին։ Եվ պապ-…նախապապ Աբրահամը արդարի սերնդի մեջ տասանորդը վճարեց Մելքիսեդեկին, և դա բաժին ընկավ այստեղ ներքևում գտնվող նրա ծոռին, արդարների սերմին։

193 Հիմա գալիս է օձի սերմը։ Հիմա, հիշում եք, թշնամություն, պատերազմ է լինելու նրանց միջև։

194 Օձի սերունդը հայտնվում է և ի՞նչ է արտադրում։ Վերցնենք առաջին մի քանի տարիները։ Հիմա տեսեք, թե ինչ է այնտեղ կատարվում։ Մենք կկարդանք դա մինչև վերջ, որովհետև հենց նոր ճշտեցի դա։ Օձի սերմն արտադրեց Կայենին։ Կայենը գնաց Նայիդ երկիր, արտադրեց հսկաներ, իսկ հետո նրանք եկան Նոյի երկիր։

195 Նրանք խելացի, կրթված, ինտելեկտուալ մարդիկ էին։ Ճի՞շտ է։ Նրանք շինարարներ, գյուտարարներ,

գիտնականներ էին. ոչ թե արդարի սերմի, այլ սատանայի՝ օձի սերմի, միջոցով: Նրանք այնպիսի մարդիկ էին, ինչպես, ինչպես գիտնականներ, շինարարներ, մեծ մարդիկ, մանկավարժներ: Սուրբ Գիրքն է այդպես ասում: Նրանք պղինձ, երկաթ, մետաղներ էին ձուլում: Նոր բաներ էին հորինում: Տարբեր մետաղներ էին կոփում, տներ էին կառուցում և այլն: Սուրբ Գիրքն է այդպես ասում: Եվ նրանք կնոջ սերմի, Նոյի՝ արդարի, ծաղր անողներն էին: Ճի՞շտ է դա:

196 Եկե՛ք մի փոքր ավելի հեռու հետևենք նրանց: Հետո մենք հասնում ենք տապան, ամեն ինչ ոչնչացված էր: Մեղքի մեջ համախմբվեցին, և նրանք կանոն ընդունեցին՝ խելացիները և կրթվածները: Մինչև Աստված նայեց ցած, շատ բան չէր մնացել, դրա համար Նա Նոյին և իր ընտանիքը մցրեց տապան, անձրև տեղացրեց և բնաջինջ արեց ամեն ինչ: Եհովքին նախապես հափշտակեց: Ճի՞շտ է դա: Այնտեղ էր ողջ սերմը, համարյա ամբողջը, բայց Նա նպատակ ունի, որը պետք է իրականանա:

197 Հիմա, Նոյը և իր որդիները, որոնք դուրս եկան՝ Քամը, Սեմը և Հաբեթը, դուրս եկան արդարների շարքով:

198 Ուրեմն սերն ինչպե՞ս տեղափոխվեց: Այն մտավ տապան, ճիշտ այնպես, ինչպես որ սկզբում արեց, կնոջ՝ իրենց կանանց միջոցավ: Նրանք սատանայի սերմն անցկացրին տապանի միջով, ճիշտ այնպես, ինչպես Եվան սատանայի սեմրը ընդունեց և ծնեց Կայենին, կնոջ միջոցով:

199 Դուք կանանց բարձրացնում եք ամբիոն որպես քարոզիչներ, Աստվածաշունչն դատապարտում է դա: Պողոսն ասում է. *«Եթե մեկը կարծի, թե ինքը մարգարե է կամ հոգևոր, թող իմանա, որ այն, ինչ գրեցի, Տիրոջ պավիրաններն են: Բայց եթե նա տգետ է, թող տգետ մնա»:*

200 Դրա համար ես դուրս եկա այստեղի մկրտական եկեղեցուց: Եղբայր Ֆլիմանը քիչ առաջ այստեղ էր. կարծեմ այդ երեկո նա այնտեղ էր: Դոկտոր Դեյվիսն ասաց. «Կանգնեք այստեղ և այս կանանց ձեռնադրեք քարոզիչներ»:

Ես ասացի. «Ես դա չեմ անի: Ոչ, իհարկե»:

Նա ասաց. «Դե, ես ձեզ դուրս կշպրտեմ:

201 Ես ասացի. «Ավելի լավ ինձ դուրս շպրտեք,— ասացի,— սա Աստծո Խոսքն է, և Այն դատապարտում է դա: Ես չեմ

կարող սատարել այն, ինչ Աստված դատապարտում է»: Ո՛չ, պարո՛ն:

202 Ով երբևէ դա անում է, ցույց է տալիս, որ իրենք սուտ վարդապետներ, սուտ մարգարեներ են: Աստվածաշունչն է ասում, որ նրանք այդպիսին կլինեն: «Եթե հնարավոր լիներ, ընտրյալներին էլ կմոլորեցնեին»: Ահա խնդրեմ:

203 Այժմ ուշադրություն դարձրեք այս բանին: Այնտեղից հետո դուրս եկավ Քամը՝ Քամն իր կնոջ հետ, և մյուսները: Նրա վրա անեցք էր դրված: Քամից առաջացավ Նեբրովթը, ով կառուցեց Բաբելոնը: Բաբելոնից դուրս եկավ Կաթոլիկ եկեղեցին, դրա սկիզբը: Անցնում է Աքաաբի միջով: Աքաաբից անցնում է Հուդա Իսկարիովթացու մեջ. վերջանում է հակաքրիստոսով:

204 Եվ այս վերջին օրերում այստեղ են նեռի ոգին և Քրիստոսի Հոգին: Նեռի ոգին, որ ասում է. «Հրաշքների ժամանակներն անցել են», Քիստոսի Հոգին, որ ասում է. «Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»: Նեռի ոգին ասում է. «Ոչ մի տարբերություն չկա, եթե մկրտված եք «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» մեջ, ջուր են լցրել, ջրով եք ցողվել, ինչ էլ որ լինի, նույն բանն է նշանակում»: Ատվածաշունչն ասում է, որ Աստված անսխալական է, և Նա չի կարող փոխվել: Ո՞ւմ եք դուք ծառայելու: Որոշումը ձերն է:

205 Հիմա դուք կասեք. «Նրանք կարո՞ղ են միասին կենալ: Եղբա՛յր Բրանհամ, դուք ասացիք, որ այդ տապանում և՛ Քամն էր, և՛ Սեթը»: Ճիշտ է, միանգամայն ճիշտ է: Քամը չար էր, Սեմը կրոնասեր էր և արդար: Շատ լավ:

206 Եկե՛ք հետևենք Քամին: Շատ լավ, հիմա, Քամն ու Սեմը գտնվում էին նույն տապանում. մեկն արդար էր, մյուսը՝ չար: Աղավնին ու ագռավը գտնվում էին նույն տապանում: Հուդան ու Հիսուսը գտնվում էին նույն եկեղեցում: Նեռը և Սուրբ Հոգին գտնվում էին նույն եկեղեցում:

207 Այսօր էլ նույն հոգին է գործում: «Աստվածապաշտության կերպարանքն ունեն, շատ կրոնասեր են, աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունը ուրացել են. այդպիսիներից ե՛տ քաշվիր»: Սուրբ Հոգին հայտարարում է. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»: Ո՞ր կողմն եք դուք ընտրելու:

208 Հակաքրիստոսն ասում է, որ *Սա* ընդամենը հավատամքների գիրք է: «Մենք կկրկնենք Առաքյալների հավատո հանգանակը»: Ես մարտահրավեր եմ նետում ցանկացած քարոզիչին, որ ասի ինձ, թե որտեղ է Աստվածաշնչում Առաքյալների հավատո հանգանակը գտնվում. «Ես հավատում եմ Աստծուն, Ամենակարող Հորը, երկնքի և երկրի Արարչին. Հիսուս Քրիստոսին՝ Իր Որդուն: Ես հավատում եմ սուրբ հռոմեական Կաթոլիկ եկեղեցուն, սրբերի հաղորդակցությանը»: Որտե՞ղ եք դուք գտնում դա Աստվածաշնչում: Բայց և այնպես դուք այդ կրկնելու եք ձեր մեծ մեթոդական և մկրտական եկեղեցիներում: Սա սատանայի վարդապետություն է, և սուտ մարգարեներն են դա սովորեցնում:

209 Հուսով եմ՝ չեմ վիրավորում ձեր զգացմունքները, բայց ես խորհուրդ եմ տալիս դա այս խորանին: Դուք այստեղ՝ Բրանհամի խորանում, խուսափեք նման բաներից: Ամենը, ով հավատում է սրբերի հաղորդակցությանը, սպիրիտիզմ է: «Մեկ միջնորդ կա Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս Մարդը»: Կարևոր չէ, թե ինչքան Մարիամներ կան:

210 Տեսնո՞ւմ եք, թե ինչ տեղի ունեցավ կնոջ սերմի հետ այնտեղ: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես կնոջ սերմն անցավ այնտեղ:

211 Տեսեք թե ինչ է այսօր Ամերիկայում: Ամերիկան սատանայի սերմն է: Ի՞նչ է սա: Նա կնոջ ազգ է: Դուք լսելեք. «Սա կնոջ աշխարհն է»: Դա ճիշտ է: Սա կնոջ ազգն է: Նրանք են չափանիշներ սահմանում:

212 Վերջերս այնտեղ՝ Շվեյցարիայում էի: Կանայք ասում են...Մի փոքրիկ, Սուրբ Հոգի ունեցող կին ասաց. «Գիտեք, եթե ես գնամ Ամերիկա, ասում են, որ կանայք ազատություն ունեն»:

213 Ես ասացի. «Թո՛ւյլ տվեք ձեզ ասել, թե ինչին է դա տանում»: Եվ ես սկսեցի նրան պատմել:

Նա ասաց. «Ո՛հ, ողորմյա, ես դրանից ոչինչ չեմ ուզում»:

Ես ասացի. «Դա այնտեղ է տանում»:

Դուք գիտեք, որ նրանք այնտեղ չեն անում այն բաները, ինչ անում են այստեղ:

214 Ի՞նչ է սա: Թո՛ւյլ տվեք ինձ ցույց տալ ձեզ, որ Ամերիկան կին է: Մեր դրամի վրա կնոջ պատկերն է: Այն ամենը, ինչ կա այստեղ, կին է:

215 Ասացեք ինձ, երկրում բավականաչափ գինետներ չկան, որ...Տեղադրեք քառասուն գինետներ այս քաղաքում, և դրեք երեք գեղեցիկ արտաքինով մարմնավաճառ կանայք, ովքեր ոլորվելով իջնում են փողոցով. նրանք ավելի շատ հոգիներ կուղարկեն դժոխք, ովքեր ցանկությամբ նայում են իրենց, քան բոլոր գինետները, որ կարող եք տեղադրել քաղաքում: Դա միանգամայն ճիշտ է:

216 Ուրեմն ո՞վ է նա: Կին է: Ի՞նչ է նա: Ամերիկայի աստվածը:

217 Վերցրեք այդ կինոդերասաներից մի քանիսին. նրանք գալիս են այստեղ և չորս կամ հինգ անգամ ամուսնանում են, միաժամանակ երեք կամ չորս տարբեր ամուսիների հետ են ապրում, և այդ ամսագրերից մի քանիսը ցույցադրում և պատմում են նրանց մասին, տեղադրելով նրանց մերկ նկարները: Եվ դուք՝ փոքրիկ աղջիկներ, դրանից օրինակ եք վերցնում (ինչո՞ւ), որովհետև ձեր մայրիկը ձեզանից առաջ, գուցե, ձեր տատիկը ձեզանից առաջ: Տեսնո՞ւմ եք, այդ օձի սերմը որտեղ է սողոսկում: Անկասկած, այդպես է:

218 Եվ ի՞նչ արեց այն: Եթե օրենքի տակ անօրենությունը փոխանցվում է մինչև տասնչորս սերունդ, ի՞նչ կլինի անօրենության, եթե այցելվեր այս օրում, երբ արդարների սերմը գրեթե սպառվել է: Եվ Աստված ասել էր, որ կգա մի ժամանակ, որ եթե Նա չկրճատի գործունեությունը, դրանից ոչինչ չի մնա: Մենք վերջին ժամանակներում ենք: Որսացեք այս երեկո արդարներին. անցեք քաղաքներով:

219 Ո՛հ, դուք կգտնեք եկեղեցու անդամներին նույնքան հավատարիմ մկրտականներին, երիցականներին և այլն, որքան հնարավոր է: Բայց նրանք Աստծո հետ ավելի կապ չունեն, քան նապաստակը ձյան կոշիկներ հագնելու հետ: Ոչինչ չգիտեն այդ մասին: Այն ամենը, ինչ նրանք գիտեն սա է. — Դուք քրիստոնյա՞ եք:

— Ես կաթոլիկ եմ:

— Դուք քրիստոնյա՞ եք:

— Ես մկրտական եմ:

— Դուք քրիստոնյա՞ եք:

— Ես երիցական եմ:

— Դուք քրիստոնյա՞ եք:

— Ես հոգեզալստական եմ: Դա դրա հետ ոչ մի կապ չունի:

220 Դուք քրիստոնյա եք, որովհետև Աստված Իր շնորհքով, փրկում է ձեզ: Եվ դուք հասկանում եք դա: Եվ ինչ-որ բան փոխել է ձեր կյանքը, որ այլ կերպ ապրեք: Եվ դուք նոր մարդ և արարած եք Հիսուս Քրիստոսի մեջ: Անկասկած:

221 Բայց դուք տեսնո՞ւմ եք, թե օձի սերմը որտեղ է: Ի՞նչ էր օձի սերմը: Ծնություն: Դուք հետևո՞ւմ եք: Ծնություն Եվայի հետ: Ի՞նչ տեղի ունեցավ դրա հետ: Ի՞նչ բերեց դա: Ի՞նչ է դա այս երեկո:

222 Հետ նայեք մի քանի տարի առաջ, երբ դուրս եկավ առաջին երգը: Դուք՝ տարեցներ, երբ...Առաջ երգերը գրաքննում էին, նախքան թույլատրելը, որ դրանք երգեն ռադիոյով: Եվ առաջինը, որ դուրս եկավ, սա էր. «Ծրջեք դրանք, աղջիկներ, շրջեք դրանք, ցույց տվեք ձեր գեղեցիկ ծնկները», և ամբողջը սրա նման: «Ծիծաղեք հայրիկի, ծիծաղեկ մայրիկի վրա և բոլորդ ասեք՝ հա՜, հա՜, հա՜»: Դա առաջին երգն էր, որ թույլ տվեցին, որ սողոսկի: Ձեր կարծիքով որտե՞ղ է այսօր այն տղան, որ գրեց այդ երգը: Մահացել է:

223 Ի՞նչ եք մտածում Կլարա Բոուի մասին, ով առաջինը դուրս եկավ և ասաց՝ *Վտանգավոր կորեր,* և մերկապարը գնաց, որը հազարավոր հոգիներ ուղարկեց դժոխք: Ձեր կարծիքով որտե՞ղ է նա այսօր: Վաղուց մահացել է: Որտե՞ղ է նա իր այդ մարմնով: Պառկած է այնտեղ, փոշու հետ խառնված, և որդերն ու թրթուրները կերել են նրան: Իսկ նրա հոգին գտնվում է այնտեղ՝ արդար Աստծո առջև:

224 Որտե՞ղ է այն մարդը, ով վերցրեց այդ կանանց և նրանց համար հին կեղտոտ տեսք ունեցող հագուստներ կարեց, որը նրանք հագան՝ այս կամ այն կողմից վատ նստո մասերով: Ասում էին. «Ինչի՞ համար եք դա անում: Ինչո՞ւ եք այդ տեսակ բաները հագնում: Որովհետև դուք ուզում եք, որ տղամարդիկ շոռան ձեր, և դա այլ կերպ չես բացատրի:

225 Իսկ դուք գիտե՞ք, որ երբ դուք այդ բանն անում եք և մի մեղավոր նայում է ձեզ, գիտե՞ք, թե ինչ է կատարվում: Դատաստանի ամբիոնին...Դուք կասեք. «Եղբա՛յր Բրանհամ, ես իմ ամուսնուն հնարավորինս հավատարիմ եմ եղել»: Դուք մեղադրվելու եք շնություն գործելու մեջ: Հիսուսն ասաց. *«Ով մի կնոջ նայի նրան ցանկանալու համար, արդեն շնություն է արել նրա*

հետ իր սրտում»: Երբ այդ մարդը պատասխան տա շնություն գործելու համար, ո՞վ է լինելու պատճառը: Ինչպես հագնվել և ցուցադրել եք ձեզ:

226 Հիմա, ես չեմ ասում, որ դուք պետք է հագնվեք հին տուփից հանած հնաոճ հագուստով: Բայց դուք կարող եք ավելի կանացի տեսք ունենալ:

227 Դուրս գալ այստեղից, մերկանաս, փոքրիկ կարճատաբատով և մի փոքր ժապավեն *այսպես* շուրջը կապած, իսկ քո երեխան այսպիսի աչքերով, ծխախոտը բերանումդ քայլես: Դուք դա ոչ մի բարի նպատակի համար էլ չեք անում: Փաստացի դուք կարող եք անմեղ լինեք, բայց սատանան ձեզ օգտագործում է որպես գործիք, ճիշտ այնպես, ինչպես Եվային օգտագործեց:

228 Ինչո՞ւ է սա կնոջ ազգ: Որովհետև տանում է ուղիղ դեպի կաթոլիկության տիրապետությանը: Ի՞նչ է դա այսօր: Դուք երբեք չեք լսի, որ Հիսուսին հիշատակեն: «Ողջույն, Մարիամ: Մարիամ Աստվածամայր: Սուրբ Սեսիլիա»: Ամեն տեսակ սրբեր, մեռած սրբեր: Վերջերս այստեղ...

229 Անցած տարի Մեքսիկայում էի: Այնտեղ մի խեղճ կին եկավ, հազիվ էր քարշ գալիս: Նրա ծնկները լրիվ վերքերով պատած, այսպես, թաքցնելով, լաց լինելով և ձեռքերը բռնելով: Եվ հայրը քայլում էր, երկու փոքրիկ երեխաներին գրկած, նրանք լաց էին լինում. մայրիկն այնպես տառապում էր. որովհետև ինչ–որ մի կին, ում նրանք սուրբ են համարում, մահացել էր: Նրանք բլուրի վրա կանգնեցրել էին նրա արձանը: Ինչ–որ սիրեկան սպանել էր նրան: Եվ հենց որ նա այդպես սպանվում է, անշուշտ, նա սուրբ է. նա կաթոլիկ էր: Ուստի նա գնում էր ապաշխարելու. և նա ստիպված էր երկու մղոն քարշ գալ, սալաքարերի վրայով, ապաշխարություն անելու համար:

230 Եղբա՛յր, եթե մի բան կա, որ ես պետք է անեմ, ուրեմն Հիսուս Քրիստոսը իզուր է մահացել: Ծնորհք, ես փրկված եմ. և սա ոչ թե ինձանով է, այլ Աստծո կամքով և Աստծո բարության շնորհիվ:

231 Լրագրողներն ինձ հարցրեցին, ասացին. «Պարոն Բրանհամ...»: Փոքրիկ, մահացած երեխան կենդանացել էր, և մի քանի այլ բաներ այնտեղ: Երեսուն հազար կաթոլիկ...Չէ, ներողություն եմ խնդրում: Քսան հազար էր: Երեսուն հազարը Աֆրիկայում էր: Քսան հազար կաթոլիկ միանգամից ընդունեցին Քրիստոսին որպես

անձնական Փրկիչ, երբ դա կատարվեց՝ կանգնած Մեխիկո քաղաքում: Եվ այդ քահանաները ոչինչ չէին կարող ասել. չափազանց շատ մարդիկ կային, անկարգություններ կսկսվեին: Չափից դուրս շատերն էին այս կողմում: Այսպիսով նա ասաց. «Պարոն Բրանհամ, դուք հավատո՞ւմ եք, որ մեր սրբերն էլ կարող են նույն բանն անել, ինչ որ դուք եք անում»:

232 Ծանոթ լինելով իրենց վարդապետությանը՝ ասացի. «Իհարկե, եթե ողջ են»: Տեսնո՞ւմ եք: Այսպիսով, դու չես կարող կաթոլիկ սուրբ լինել, մինչև չմեռնես, գիտեք:

Այսպիսով նա ասաց. «Ո՛հ, չեք կարող սուրբ լինել, եթե չեք մահացել»:

233 Ես ասացի. «Որտե՞ղ եք դա կարդացել»: Պողոսն ասում է. «Եփեսոսում գտնվող սուրբերին», և նրանք, ովքեր Աստծուց են կանչված: «Եփեսոսում գտնվող սուրբերին», նա ուղարկում էր իր նամակը. և Գաղատիայի այլ վայրերում գտնվող սուրբերին, և, և «Հռոմի սուրբերին», և այլն: *Սուրբեր* «սրբվածներ»: Ի՞նչ կասեք դրա մասին»:

234 Նա ասաց. «Անշուշտ, մենք հիմա չպետք է վիճենք Աստվածաշնչի մասին: Որովհետև մենք ենք եկեղեցին, և այն, ինչ եկեղեցին է ասում: Մեզ համար կարևոր չէ, թե ինչ է ասում Աստվածաշունչը: Կարևորն այն է, ինչ եկեղեցին է ասում: Ասաց. «Այդ դեպքում ի՞նչ կարծիք ունեք կաթոլիկ եկեղեցու մասին»:

235 Ես ասացի. «Կուզեի, որ այդ հարցը ինչ չտաք, բայց քանի որ հարցրեցիք, ես կասեմ ձեզ Ճշմարտությունը»:

Ասաց. «Դե, ես ուզում եմ, որ ինձ ասեք Ճշմարտությունը»:

Ես ասացի. «Ես որքան գիտեմ դա ոգեհարցության ամենաբարձր ձևն է»:

Նա ասաց. «Որտեղի՞ց եք դա վերցրել»:

236 Ես ասացի. «Ցանկացած մարդ, ով փորձում է մեռելների հետ խոսել, սպիրիտիստ է, — ասացի,— եթե այդ սուրբը պատասխանում է, ուրեմն դժոխքում է գտնվում: Որովհետև նրանք, ովքեր հատել են այդ ճանապարհը իմ...իմ Աստվածաշունչն ասում է, որ նրանք չեն կարող հետ վերադառնալ»: Դա ճիշտ է: Նաև ասացի. «Եթե այդպես է, եթե նա սուրբ է եղել, ուրեմն դևն է խոսում սրբի նման, և դա ամենևին էլ սուրբը չէ»:

237 Եվ նա ասաց. «Դե, հիմա, մի որպե,— ասաց,— դուք էլ եք աղոթում մեռելներին»:

Ես ասացի. «Որտե՞ղ»:

Նա ասաց. «Հիսուս Քրիստոսը մահացած է»:

238 Ես ասացի. «Բայց Նա հարություն առավ: Նա մեռած չէ: Բայց Նա ապրում է՝ բարեխոսություն անելու համար, և միակ բարեխոսն է Աստծո և մարդկանց միջև»:

239 «Ես Նա եմ, որ մեռած էի, ու հիմա կենդանի եմ, կենդանի եմ հավիտյան: Ես ունեմ մահվան ու դժոխքի բանալիները»: «Նա, ով ուզում է, թող գա և ձրի խմի կենաց ջրերից»: Ո՛հ Աստված իմ: Դա մեր Աստվածն է: Դա մեր Աստվածն է:

240 Եվ արդար սերմը համարյա սպառվելու վրա է: Խոսեք մարդկանց հետ այս բաների մասին: Ասեք մարդկանց, որ վերադառնան աստվածաշնչյան ճանապարհներին: Խոսեք մարդկանց հետ հրաշքների մասին: Խոսեք մարդկանց հետ այդ մասին: Իրենց «եկեղեցին չի հավատում դրան», ուստի նրանք ապօրինածին երեխաներ են Աստծո համար: Աստվածաշունչն ասում է, որ եթե մենք չենք կարող հալածանքները, փորձությունները, ծաղրանքները, «սուրբ-թռչկոտողներ» կոչվելը և այլն նմանատիպ բաները տանել, եթե դուք չեք կարող դրանք հանդուրժել, ուրեմն խորթ եք և ո՛չ թե Աստծո որդիներ: Աստվածաշունչն է այդպես ասում:

241 Անվանեք ինձ «սուրբ թռչկոտող», եթե ուզում եք: Անվանեք ինչ ուզում եք: Քանի դեռ իմ սիրտը ուղիղ է Աստծո հետ և իմ փորձառությունը Աստծո Սուրբ Գրքի համեմատ է, ես գնալու եմ այս նույն ուղությամբ: Այո՛, պարո՛ն: Ահա թե ինչին ենք մենք հավատում: Դա կենդանի Աստծո Եկեղեցին է, որն աստվածաբանության միջոցով չի գալիս, մարդու կողմից ստեղծված ինտելեկտուալ հասկացողությամբ չի գալիս, այլ՝ բացարձակ Ճշմարտության միջոցով, որ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին է:

242 Եթե ես ունենայի միայն ինտելեկտուալ հասկացողություն, որովհետև մկրտական կամ մեթոդական եկեղեցիներն ինձ ուսվորեցրել են, որ սա *այսինչ-այնինչ* բաներ են, երբ լսեցի այս Աստվածաշունչը, եթե Աստվածաշնուչնը...Եթե ես մկրտված լինեի «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով և կարդացած լինեյի այս Աստվածաշունչը, և քարոզիչն ինձ ասեր, որ

Աստվածաշնչում չի եղել մեկը, որ մկրտված լինի Հիսուս Քրիստոսի Անունով, և ես կարդացած լինեի և տեսնեի, որ դա Ճշմարտություն է, ես հնարավորինս արագ կնետվեի ջուրը: Այո՛, պարո՛ն:

243 Եթե ինչ-որ մեկն ինձ ասեր, որ, որ Հիսուս Քրիստոսը մեծ բժիշկ է, իսկ իմ եկեղեցին ինձ ասեր. «Հրաշքների ժամանակներն անցել են», իսկ ես բժշկության կարիք ունենայի, ինչքան որ ուզեր ուժ կա կսլանայի այդ խորանը՝ բժշկություն ստանալու համար: Անշուշտ կսլանայի:

244 Եթե ես քարոզիչ լինեի և իմ ամբիոնում կին քարոզիչ ունենայի, իսկ ես կարդացել եմ Աստվածաշնչում և տեսել եմ, որ կինը չպիտի քարոզի, ես նրան դուրս կհանեյի այնտեղից, եթե կաշիս էլ քերթեին:

245 Հիշում եմ, մի երեկո նստած էր հենց այնտեղ՝ հետևում, որտեղ Ռայթ քույրն է նստած, որ մի կին պատրաստվում էր ինձ դռնից դուրս շպրտել նման բան անելու համար: Այո՛, պարո՛ն: Ես ասացի. «Մի եկեք իմ եկեղեցին ձեր հին...»: Մի ժամանակ, երբ նրանք հագնում էին, ավելի ճիշտ կարճացնում էին իրենց զգեստներն այսպես մինչև այստեղ, և անփույտ տեսքով ինչ-որ բան էր ստացվում, և համարյա իրենց մարմնի կեսը երևևում էր: Ես ասացի. «Եթե նրանք երբևէ գան իմ եկեղեցի, ես անշուշտ նրանց դուրս կհանեմ»: Եվ այնտեղ ներքևում մի ծեր թեթևամիտ կին. դրանից հետո շատ չանցած նա մահանում է. և մահանալու ժամանակ նա կանչում է ինձ: Կաթոլիկ աղջիկ էր, բարձրացավ այնտեղ և դրանով այդպես նստեց: Ես նայեցի խորքը և տեսա, թե որտեղ է նա նստում, այդ ժամանակ երգում էին: Ես վերարկուս հանեցի, գնացի այնտեղ և գցեցի այն իր ուսերին: Ասացի. «Տիկի՛ն, եթե դուք պատրաստվում եք լսել իմ քարոզը, հագեք այս վերարկուն, խնդրում եմ, քանի դեռ գտնվում եք Աստծո եկեղեցում»: Հասկանո՞ւմ եք: Անկասկած:

246 Նա տեղից ցատկեց քիթ մոռութը կախած: Նա դուրս եկավ շենքից: Նա ասաց. «Եթե նա այդպիսի կրոն ունի, ուրեմն ես թույլ չեմ տա, որ իմ կովը նման կրոն ունենա»:

Ես ասացի. «Մի՛ անհանգստացեք, նա չի էլ ունենա»:

247 Հետո մենք վրան կանգնեցրինք, նրանք ինձ կանչեցին, երբ նա մահանում էր: Նա սրտի կաթված էր ստացել և մահանում էր: Նրա ամուսինը եկավ և ասաց. «Կարո՞ղ եք, շուտ գնանք»: Իսկ ես հենց հավաքույթում էի գտնվում:

Խոշոր, բարձրահասակ տղա, կանգնած դռան մոտ, սպասում էր ինձ: Եվ ես սլացա ինչպես...

248 Նստեցի մեքենաս և սլացա այնտեղ: Երբ գնացի այնտեղ հանդիպեցի այն տարեց բուժքրոջը, որը դեռ ապրում է Հովարդ Փարկում: Նա ասաց. «Պատվելի՛, գալու կարիք չկա»: Դա մոտ քսան տարի առաջ էր, գուցե մի փոքր ավելի: Ասաց. «Նա մահացել է,— ասաց,— մոտ երեք րոպե առաջ մահացավ,— ասաց,— նա գոռում էր որքան կարող էր ուժգին, ձեր համար,— ասաց,— ես ձեզ փոխանցելու բան ունեմ»:

Ասացի. «Ի՞նչ»:

249 Ասաց. «Ասա այդ քարոզչին, որի մասին ես ասացի. «Խնդրում եմ ներեցեք ինձ»»:

250 Ես գնացի այնտեղ, որպեսզի տեսնեմ իրեն: Գեղեցիկ կին. նա շատ ուժեղ տառապանքների մեջ էր: Նա իր քթի շրջանում փոքրիկ պեպեններ ուներ. գեղեցիկ կին: Եվ այդ պեպենները կարծես դուրս էին թռել: Իսկ աչքերը խոռոչներից ամբողջությամբ դուրս էին եկել և կիսով չափ շրջվել էին: Իհարկե, աղիքներն ու երիկամները գործում էին, և գոլորշին ամբողջ անկողնով բարձրանում էր այդպես:

251 Նրա ամուսինը նայեց ինձ, ասաց. «Եղբա՛յր Բրանհամ, աղոթեք, որովհետև նա ուզում էր ձեզ տեսնել»:

Ես ասացի. «Աղոթքը հիմա նրան ոչ մի օգուտ չի տա»:

252 «Ծառը որ կողմը թեքվում է, այնտեղ էլ ընկնում է»: Տեսնո՞ւմ եք: *«Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի, որովհետև մարդ ինչ որ ցանում է, այն էլ պիտի հնձի»:*

253 Տեսնո՞ւմ եք, թե որտեղ է դա: Հիմա ի՞նչ կատարվեց: Նայե՛ք կնոջը, որ դա կաներ: Նայե՛ք այն կանանց, որ ապրում էին այնտեղ. հավաքույթների աղջիկ, ինչ էր նրա աղջիկը: Թեթևաբարո: Ի՞նչ է դարձել թեթևաբարոի աղջիկը: Ռոկ-ընդ-ռոլի դեռահաս: Ի՞նչ է դառնալու նրա աղջիկը: Հը՛մ: Ի՞նչ է սա:

Տեսնո՞ւմ եք արդար սերունդը:

254 Նայեք ձեզ՝ մկրտականներ: Մի քիչ հետ գնացեք: Վերադարձեք Ջոն Սմիթին՝ ձեր հիմնադիրին, դուք՝ մկրտականներ: Երբ նա աղոթում էր մարդկանց անօրենության համար, մինչև որ...նա լացում և աղոթում էր մարդկանց համար, մինչ որ նրա կոպերն ուռում

փակվում էին, ու նրա կինը ստիպված էր լինում սեղանի շուրջ նրա նախաճաշը կերակրել նրան։

255 Իսկ դուք այստեղի մեթոդականներ, զարդերը ձեր քթին և ականջներին, և սատանայի համար կարծես կողաթամբ լինեք. դուրս եք գալիս, կարճատաբատներ եք հագնում և նմանատիպ բաներ։ Երբ ծեր Ջոն Սմիթը՝ մեթոդական եկեղեցու երեցներից մեկը, մահից առաջ ութսունհինգ տարեկան հասակում չորս տարվա, ավելի ճիշտ չորս ժամ տևողությամբ կարճ քարոզ քարոզեց։ Նրան պետք էր բարձացնել և նստացնել ամբիոնի հետևում։ Եվ ահա նրա վերջին խոսքերը։ Նա ասել է. «Ես այնքան ցնցված եմ մեթոդական եկեղեցու գործողություններից,— ասել է,— նույնիսկ մեթոդական եկեղեցու աղջիկներն են ոսկե մատանիներ կրում մատներին»։ Ի՞նչ կասեր նա հիմա, երբ կարճատաբատներով երգում են երգչախմբում։

256 Դուք լավ էիք վազում։ Ի՞նչ կատարվեց։ Դուք վարվում եք ձեր մայրիկի նման։ Դա հենց դա է։

257 Դրա համար մենք չենք ուզում այս հարանվանություններից և ոչ մեկը և չենք կախում ոչ մի պիտակ այստեղ. «Մենք մեթոդական ենք։ Մենք մկրտական ենք»։ Մենք պարզապես Քրիստոսից ենք։ Թողեք դա այդ ձևով, եղեք ազատ։

258 Հիմա, տեսնո՞ւմ եք օձի սերմը։ Նման կին ի՞նչ է.... Ի՞նչ է դա անելու։ Ի՞նչ։ Նրանք շարունակում են, գնալով իջնում են ցած։ Նրանք հետ մղեցին մկրտականներին, հետ մղեցին մեթոդականներին, հետ մղեցին երիցականներին։ Ի՞նչ արեցին նրանք։ Բոլորն էլ իրենց մայրիկի՝ ծեր պոռնիկի նման, հետ գնացին։ Ահա թե որտեղ են բոլոր նրանք, նույն պոռնկությունն են անում։ «Դե, ոչ մի տարբերություն չկա, թե արդյոք նրանք ընկղմվել են, նրանք ցողվել են, նրանք, նրանք եկել, խոստովանություն են արել։ Նրանք պահպանել են վեց ամսվա արգելքը. այդ ընթացքում շատ չեն խմել և այլն։ Նրանք լավ անդամ են դարձել։ Լավ վճարում են...»։ Ո՛հ, Աստված իմ։ Դա Հոգու պտուղների հետ ոչ մի կապ չունի։

259 Հոգու պտուղներն են՝ «հավատք», հավատալ, որ Հիսուս Քրիստոսը նույնն է, երեկ, այսօր և հավիտյան. «սեր», եղբայրների հանդեպ. «ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, բարություն,

քաղցրություն, հեզություն, ժուժկալություն»: Դրանք են Հոգու պտուղները:

260 Իսկ մենք վերցնում ենք մարդուն. «Դե, նա…նա բարի համբավ ունի հարևանության մեջ»: Ինչպես Եսավը:

261 Եսավը երբեք ոչ մեկին վատություն չէր արել, բայց նա սատանայից էր. իսկ Հակոբը, որ նույն արգանդից էր դուրս եկել, Աստծուց էր: Սատանայի սերմը. կնոջ Սերմը և Աստծո Սերմն անցնում է միջով:

262 Հիմա, տեսնում եք, ամեն ինչ հանգում է դրան, թե ի՞նչ է մնացել այսօր աշխարհում: Ես շատ կոպիտ ձևով եմ ասելու սա, վարսելու եմ, սրանից հետո հաջորդ հավաքույթին կսկսենք արթնությունը: Այն ձև է ստացել: Եվ խնդրում եմ, ես սրբապղծություն չեմ անում: Ես դա ստորությունից չեմ ասում: Հասել է այն կետին, որ վերածվել է մի մեծ անօրինական կրոնավոր, ապօրինածին երեխաների կույտի: Դրանք են իմ վերջնական դիտողությունները: Հենց դրան էլ հասել է: Դուք գիտեք, որ դա ճշմարտություն է: Դա հասել է այն կետին, որ մնացել է միայն՝ եկեղեցուն հարել և եկեղեցուն անդամակցել. «Աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց ուրանում են դրա զորությունը», մինչև որ հասնի մի խումբ կրոնավոր, անպիտան երեխաների: Դա հենց այն է, ինչ կա:

263 Ի՞նչ է մնում հաջորդը: Այնտեղ հրթիռ է կախված, դրանցից մի քանիսը, կոբալտի ռումբեր և այլն: Նրանք պարզապես սպասում են այդ ժամվա գալուն: Եվ կրակով ոչնչացում է լինելու, ինչպես ջրով եղավ:

264 Բարեկամնե՛ր, ինչ էլ որ անեք, եթե դուք քրիստոնյա եք և Աստծուն ունեք ձեր սրտում, ու գիտեք, որ մահից անցել եք դեպի կյանք, ապա պետք է ամենաերջանիկ մարդը լինեք աշխարհում:

265 Երբ Սուրբ Հոգին ձեր մեջ է…Երբ Աստվածաշունչն ասում է. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան», հարանվանություններն ասում են. «Բայց մենք հավատում ենք, որ հրաշքներն անցել են», Սուրբ Հոգին ասում է. «Ամեն, Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Թող այդպես լինի»:

266 Եթե Աստվածաշունչն ասում է. «Ապաշխարեցե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար, Սուրբ Հոգին կստանաք: Որովհետև այս խոստումը ձեզ ու ձեր

որդիների համար է, հեթանոսների, և այն ամեն հեռավորների համար, ում մեր Տեր Աստված...»: (Ում մեր Տեր Աստված կկանչի, տեսնում եք, ոչ թե ում մեթոդականները, մկրտականները կկանչեն, այլ ում մեր Տեր Աստված կկանչի, կստանան այս Սուրբ Հոգին, և կմկրտվեն Հիսուս Քրիստոսի Անունով, ինչն Աստվածաշունչն է ասում). երբ դա հարվածում է ձեզ, դուք ասում եք. «Ամե՛ն»:

267 Եկեղեցին ասել է. «Ո՛հ, ոչ մի տարբերություն չկա»:

268 Բայց ձեր մեջ եղող այս Սուրբ Հոգին «ամեն» կասի Իր Խոսքին:

269 «Մարդ ոչ միայն հացով կապրի, այլ Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Ահա խնդրեմ:

270 Ես ուզում եմ, որ ինձ ցույց տաք սուրբգրային մի հատված, որտեղ ասվում է, որ խնձորից է սկսվել հիմա կատարվողը: Ես ուզում եմ, որ ինձ ցույց տաք, որ նրանք խնձոր են կերել: Ես ձեզ ցույց տվեցի, թե որտեղ Կայենը նույն բանն էր մտածում, և, որտեղ նրա սերմը շարունակում է նույն բանը մտածել:

271 Բայց Աստծո հոգևոր հայտնությունն ապացուցում է Աստվածաշնչով, որ դա անօրինական սեռական հարաբերություն էր տղամարդու և կնոջ միջև: Ահա թե որտեղից են հսկաները գալիս: Ահա թե որտեղից է մեղքը գալիս: Ահա թե որտեղից է ապականությունը գալիս: Ահա թե որտեղ է այն ընկնում:

272 Հիմա նկատեք այս, այս ամենում, տեսեք, օձը կրկնակի անգամ խելացի էր: Նրա սերունդը միշտ էլ կրկնակի անգամ խելացի է եղել: Եվ ես կցանկանայի բարձրանալ այս ամբիոնի վրա և ձեռքս բռնել այս խոսափողը, ոտքերս դնել ամբիոնի վրա և ասել հետևյալը: Եվ որտե՞ղ են այսօր ձեր մեծ մտավորականները: Ձեր հովիվը, որ գնացել և մի շարք ինտելեկտուալ գիտելիքներ է ձեռք բերել և նա կանգնում է. նա երկրի ամենամեծ եկեղեցիների հովիվն է և այլն դրա նման բաներ: Որտե՞ղ է օձի սերմը գտնվում: Նման խելացի, ինտելեկտուալ վայրերում. խելացի, խորաթափանց գիտնականներ: Ահա թե որտեղ է նա: Ահա թե որտեղ է նա գտնվում:

273 *«Ո՛չ թե զորությունով, ո՛չ թե ուժով, այլ իմ Հոգով»,— ասում է Տերը:* Տեսնո՞ւմ եք: Ահա թե որտեղ եք դուք...

274 Հետո վերցնում եք մի եղբոր, ով անկյունում կանգնած, արցունքներն աչքերին, և գուցե այնտեղ կանգնած

հին կիթառ նվագելով՝ ասում է. «Եղբա՛յր, արի, գտիր Տիրոջը»։

275 Հովիվը կողքով անցնում և ասում է. «Հը՛մ։ Ես թույլ չէի տա, որ իմ եկեղեցին…Ես չէի շփվի, թույլ չէի տա, որ իմ… թույլ չէի տա, որ Լիդդին և Ջոննին, որ ինձ նման տեղում ինձ տեսնեն»։ Ծարունակեք, սատանի սերունդ, դուք ամեն դեպքում գնում եք ուղիղ դեպի ձեր հավիտենական նպատակակետը։ Դա ճիշտ է։ Ես այդտեղ կարող էի այլ բառ ասել, և ասել «ապօրինի երեխաներ», և ահա մոտավորապես որտեղ է դա։ Որովհետև տեսնում եք, դուք…

276 «Ոչ ոք չի կարող Ինձ մոտ գալ, եթե Իմ Հայրը նրան չքաշի։ Եվ բոլոր Ինձ մոտ եկողներին Ես վերջին օրը հարություն կտամ։ Ոչ մեկ չի կորցվի։ Այն ինձ մոտ է։ Ես կպահպանեմ այն։ Ոչ ոք չի կարող դա անել, բացի Սրանից»։

277 Ամեն ինչ Նրա մեջ է պարփակված։ Դուք չեք կարող ասել. «Ես մի բան եմ արել»։ Աստծո շնորհքն է արել այդ ամենը։ Ուստի, ես ոչինչ չեմ արել։ Ես ոչինչ չեմ արել, ոչ էլ դուք։ Դուք ոչ մի բանի արժան չեք եղել։ Դրա ամեն մի կտորը Աստված է արել։ Հանուն դրա դուք անգամ ձեր մատը չեք շարժել։ Դուք չեք կարող ասել. «Դե, ես լավ ընտանիքից եմ դուրս եկել։ Ես *այս* բանն եմ արել»։ Դա դրա հետ ոչ մի կապ չունի։ Աստվածն է, Ով արել է դա. Աստծո ողորմությունը։

278 Ես ներողություն եմ խնդրում հիմա, դեռ տասնմեկն էլ չկա, բայց ամեն դեպքում կավարտեմ։ Հասկանո՞ւմ եք։

279 Քանի՞սն են հասկանում, որ այն, ինչ Աստվածաշունչը խոսում է այս բաների մասին, Ճշմարտություն է։ Հատկապես դուք՝ Բրանհամի խորանի մարդիկ։ Սա ընդամենը մեկ տասնվեցերորդն է այն ամենի, ինչ մենք ուսուցանում և հավատում ենք։ Բայց հիշեք ներկա գտնվողներ, ես կարող եմ սա ասել, դուք մարդիկ, որ չեք գալիս այստեղ որպես անդամներ։ Ահա թե ինչպես ենք մենք հավատում սրան, որ *Սա* Աստվածաշունչ է, իսկ Աստվածաշունչը Աստծո Ճշմարտությունն է։

280 Մենք նաև հավատում ենք, որ Հին Կտակարանում նրանք իմանալու միջոց ունեին, թե որն է ճիշտ, և որը՝ սխալ։

281 Հիմա, մենք բոլորս գիտենք, որ նրանք գրված օրենք ունեին։ Քանի՞սը դա գիտեն։ Օրենքը, պատվիրանները

տապանակի մեջ էին գտնվում, և այլն, շատ լավ, և օրենքը ըստ պատվիրանների: Ասվել է. «Շնություն մի՛ գործիր: Ամեն շնություն գործող պետք է քարկոծվի»: Տեսնո՞ւմ եք: Դա պատվիրանն էր, և օրենքը ըստ պատվիրանի: Հիմա, տապանակը գտնվում էր *այսպես.* պատվիրանները այնտեղ էին, իսկ օրենքները ըստ պատվիրանների տապանակի կողքի գրպաններում էին: Եթե շնություն գործած մի մարդ գալիս էր այնտեղ. վերցնում և տեսնում էին, թե օրենքն ինչ է ասում՝ «քարկոծել նրան»: Նրանք դուրս էին բերում նրան և քարկոծում էին: Ահա թե ինչ էր օրենքը ըստ պատվիրանի:

282 Հիմա նրանք իմանալու ևս երկու միջոց ունեին: Որովհետև երեքն են, որ հաստատում են: Նրանք իմանալու մեկ այլ միջոց ունեին, և դա կա՛մ մարգարեի, կա՛մ էլ երազատեսի միջոցով էր: Քանի՞սը դա գիտեն: «Եթե ձեր մեջ լինի մեկը, ով հոգևոր կամ մարգարե է, Ես՝ Տերս, տեսիլքով Ինձ կճանաչեցնեմ նրան և երազով կխոսեմ նրա հետ»: Դա ճիշտ է: Հիմա, նա մարգարե էր:

283 Հիմա, եթե մի մարդ գալիս և ասում էր. «Ո՛հ ալելո՛ւյա: Ես ստացել եմ դա: Ես հիմա մարգարեանում եմ Տիրոջ Անունով: Ես հայտնություն եմ ստացել»: Նրանք թույլ չէին տալիս, որ դա ընթանա այդպես, ինչպես որ դուք եք անում: Նրանք նախ ստուգում էին դա Աստծո միջոցով:

284 Հիմա, Ահարոնի լանջապանակի վրա կար այն, ինչ Ուրիմ և Թումիմ էր կոչվում: Քանի՞սն են երբևէ լսել այս բառը: Ի՞նչ էր դա: Տասներկու քարեր էին, ամեն մի կողում վեց հատ, տասներկու պատրիարքների. յասպիս՝ Հուդան, և այլն, և այսպես շարունակ, տասներկու քարեր: Եվ այդ ժամանակ նրանք վերցնում էին այդ մարգարեին կամ երազատեսին և այդ լանջապանակը կախում էին նրա վրա, կանգնեցնում էին այնտեղ և ասում էին. «Հիմա մարգարեացիր և ասա քո մարգարեությունը»:

«Տերը խոսեց ինձ հետ և այսինչ–այնինչ բաներն ասաց»:

285 Կապ չունի, թե որքան իրական էր դա թվում, այն կարող էր կատարելապես ճշմարտության նման հնչել, բայց եթե այդ լույսերը չէին միանում և ծիածանի գույներ ստեղծում այնտեղով, Ուրիմը և Թումինը, այդ լույսերը միանալով, գերբնականն աշխատանք, հաստատում: Տեսնում եք, Աստված միշտ հաստատել է Իր Խոսքը: Հասկանո՞ւմ եք: Եվ եթե այդ գերբնական լույսերը չէին

առկայծում այնտեղ, ապա ինձ չի հետաքրքրում, թե որքան իրական էր այն թվում, դա սխալ էր։

286 Եթե երազատեսն ասում էր. «Ես երազ եմ տեսել և այդ երազում ասվում էր, որ՝ «Իսրայելը պետք է շարժվի և որոշակի տեղ գնա, որովհետև սիրիացիները կներխուժեն *այս* կողմից և կպաշարեն այն»։ Նրանք երազատեսին տանում էին այնտեղ. նա պատմում էր իր երազը։ Եթե այդ լույսերը չէին թարթում, ուրեմն նա սխալ էր, կապ չունի, թե որքան…Եթե նույնիսկ սիրիացիները արդեն նստած էին այնտեղ ճակատամարտում, նա սխալ էր։ Ո՛չ, պարո՛ն։ Նրանք բացարձակապես…դա պետք է հաստատվեր Ուրիմի և Թումիմի միջոցով։

287 Հիմա բոլորն էլ գիտեն, որ հին քահանայությունը վերացավ, վերջացավ, և Ուրիմ Թումիմն էլ վերացավ դրա հետ։ Մենք գիտենք դա, այդպես չէ՞։

288 Եվ եկավ նոր քահանայություն։ Ի՞նչ։ Մենք Ուրիմ Թումիմ ունե՞նք այսօր։ Այո՛, պարո՛ն։ Աստծո Խոսքը։ Այո՛, պարո՛ն։ *Սա՛* է։ Եթե մի մարդ որևէ հայտնություն ունի, կամ որևէ բան է ասում, կամ որևէ վարդապետություն, որը չի համապատասխանում և հա…համահունչ չի այս Աստվածաշնչի հետ, ծայրից ծայր Սուրբ Գրքի հետ, ուրեմն նա սխալ է։ Ինձ համար մեկ է, թե որ հարանվանությունից է նա, թե ինչքան լավն է, թե ինչքան խելացի է, թե ինչքան կրթված է. նա սխալ է։

289 Եվ երբ մի մարդ ձեզ ասում է այս բաները, որ մենք սովորեցրինք հիմա եկեղեցում, և ձեզ ասում է, որ. «Եթե դուք ջրցողված եք, ամեն ինչ կարգին է», նա ձեզ սուտ է ասել։ Դա Ուրիմ Թումիմի վրա չի առկայծի։ Երբ նա ձեզ ասում է, որ. «ջուր լցնելը, ամեն բան կարգին է», նա ձեզ սուտ է ասել։ Նա ձեզ ասում է. «Մկրտվել Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով», ամեն ինչ կարգին է», նա ձեզ սուտ է ասել։ Եթե նա ձեզ ասում է. «Հրաշքների օրերն անցել են», նա ձեզ սուտ է ասել։ Եթե նա ձեզ ասում է. «Նորմալ է կանանց համար քարոզելը», նա ձեզ սուտ է ասել։ Եթե նա ձեզ ասում է. «Ամեն ինչ կարգին է, շարունակեք ձեր ճանապարհը և հարեք ձեր հարանվանությանը», նա ձեզ սուտ է ասել։ Դա չի առկայծի Ուրիմ և Թումիմի վրա։ Եվ բազմաթիվ բաներ, որոնք դուրս են եկել, այդ ծեր «ՄԱՅՐ ՊՈՌՆԻԿԻ», մեջ, և հասել այնտեղ, դրա համար մենք հեռու ենք մնում հարանվանությունից։

290 Մենք սիրում ենք մեր քույրերին և եղբայրներին, որոնք այդ հարանվանությունների մեջ են: Բայց մի գնացեք և ասեք. «Ես մեթոդական եմ», և ձեզ քրիստոնյա դարձրեք, ինձ համար: Դուք քրիստոնյա եք, որովհետև ծնված եք Աստծո Հոգուց: Կարիք չկա լինել մեթոդական կամ մկրտական: Դրանցից և ոչ մեկը լինելու կարիք չկա: Դուք պետք է Աստծո Հոգուց ծնվեք: Հավատո՞ւմ եք դրան:

291 Այս հիմքերի վրա, եթե կա մեկը այստեղ, ով ուզում է համագործակցել և մտնել այս երկրպագության հաղորդակցության մեջ, և ուզում է...ուզում է ընկղմվել ջրի մեջ, մկրտվել Հիսուս Քրիստոսի Անունով, այստեղ ջրավազան կա: Ընդամենը մեկ րոպեից նրանք պատրաստվում են մկրտել:

292 Եթե կա՞ մեկը, շատերն են այստեղ, որևէ մեկը, ով ուզում է գալ, մեկ այլ ձևով: Մենք այստեղ ենք: Դա ճիշտ է:

293 Հիմա, մենք, մենք չունենք որևէ անդամություն. դուք պարզապես գալիս եք այստեղի եկեղեցի: Մենք հավատում ենք, որ Քրիստոսը մեթոդական, մկրտական, երիցական եկեղեցիներում է: Եվ Նա անդամներ ունի դրանցից յուրաքանչյուրում: Եվ ի՞նչ է պակասում այսօր. կեղծ մարգարեություն է, որ դուրս է բերում այդ բաները, այդ եկեղեցիների վարդապետությունները, որոնք բացարձակապես Աստվածաշնչին հակառակ են:

294 Հիմա, եթե ինչ-որ մեկը բացարտեր Դա ինձ, ես անշուշտ...Ես հավատում եմ, որ իմ մեջ բավականաչափ Աստծո Հոգի կա՝ քննել դա Աստվածաշնչով և գալ ու շտկել այն: Եթե ես պարզապես գայի և քարոզչի ձեռքը սեղմեի և անունս գրանցեի գրքում, իսկ սրտումս դեռ ատելություն ու ոխ, նախանձ ու կռիվ պահեյի, և դեռ անհավատություն տածեյի Հիսուս Քրիստոսի նկատմամբ, որ Նա մեծ Բժիշկ է, և նմանատիպ այլ բաներ, ես արագ կգնայի և կարգի կբերեի դա Աստծո հետ: Վստահ եմ կանեյի: Ես, ես անկեղծ կլինեի այդ հարցում: Ես կգնայի ուղիղ Աստծո հետ: Եթե ես կախված լինեի նրանից, որ մկրտական կամ մեթոդական եմ եղել, ես ծնկի կիջնեի և կնդունեի քրիստոնեությունն իմ սրտում: Ես դա կանեի: Այո՛, պարո՛ն:

295 Չմոռանաք եկող արթնության մասին, որը սկսվելու է, եթե Տերը կամենա, եկող չորեքշաբթի եկեկոյան: Այն անց է կացվելու այս բաների հիման վրա:

296 Լսե՛ք, բարեկամներ, գոյություն ունի ճշմարիտ և կենդանի Աստված: Դա ճիշտ է: Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Սուրբ Հոգին այսօր եկեղեցում է:

297 Հիմա, եթե ես ուղղակի ունենայի ինչ-որ մեկին, ով ինձ դա ասեր, ես իրավունք կունենայի կասկածել: Բայց լսեք: Մի օր, երբ ես փոքր տղա էի, կանգնած էի մի ծառի տակ. ես տեսա Նրան: Ես լսեցի Նրան: Նա ասաց ինձ, ասաց. «Հեռու մնա կեղտոտ կանանցից: Հեռու մնա սիգարետներից: Հեռու մնա հայհոյանքից, խմելուց և բոլոր նման բաներից: Երբ մեծանաս քեզ համար գործ կլինի»: Ես գիտեմ, որ Նա իրական, կենդանի Աստված է, որը համահունչ Իր Խոսքի հետ:

298 Երբ ես մի փոքր մեծացա, ինչպե՞ս Նա հանդիպեց ինձ, ինչպե՞ս խոսեց ինձ հետ: Ինչպե՞ս տեսա Նրան այնտեղ վառվող մորենու նման, և այդ Կրակը պտտվում էր այնտեղով: Ինչպե՞ս տեսա Նրան, որ ինձ հետ խոսում է և ճշտությամբ պատմում է, թե ինչ է կատարվելու. և ամեն անգամ ճիշտ այնպես, ինչպես լինում է, այդպես կատարյալ:

299 Նույն Աստվածը, ով այդպես ասում է այդ կատարյալ բաները, նույն Աստվածն է, Ով ինձ ներշնչում է սովորեցնել Աստվածաշունչն այնպես, ինչպես ես սովորեցնում եմ: Դա ճիշտ է: Այսպիսով, սա Աստծուց է գալիս: Ինձ համար սա Ամենակարող Աստված է, և Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

300 Հիսուսն ասաց. «Հորից ելա և Հորն եմ գնում»: Երբ Նա եկավ...

301 Երբ Նա Աստված էր անապատում, Նա վառվող Լույս էր: Քանի՞սը դա գիտեն: Նա վառվող Լույս էր, Կրակե Սյուն:

302 Եվ Նա եկավ այստեղ՝ աշխարհ, և ասաց. «Հորից ելա և գնում եմ...Աստծուց եմ եկել և Աստծո մոտ եմ գնում»:

303 Երբ Նա մեռավ, թաղվեց, հարություն առավ, և Պողոսը Դամասկոսի ճանապարհին նորից հանդիպեց Նրան, ի՞նչ էր Նա: Դեռ Կրակե Սյուն էր: Այո՛, պարո՛ն:

304 Ի՞նչ արեց Նա, երբ այստեղ՝ երկրի վրա էր: Ի՞նչ արեց Նա, երբ հանդիպեց Պողոսին: Ինչպե՞ս ուղարկեց նրան: Նա ուղարկեց նրան մարգարեի մոտ, ով նրան ասեց, թե ինչպես մկրտվել և ինչ անել, ձեռքերը նրա վրա դրեց և բժշկեց նրան, ասաց, որ տեսիլք էր տեսել:

305 Այդ նույն Հիսուսն այստեղ է այսօր, նույն բաներն անելով, և դեռ նույն Կրակե Սյունն է, նույն բանը սովորեցնելով, և հաստատում է դա Իր Խոսքով և նշաններով ու հրաշքներով: Ես այնքան ուրախ եմ, որ քրիստոնյա եմ, չգիտեմ՝ ինչ անեմ: Ես ուրախ եմ, որ դուք քրիստոնյա եք:

306 Եվ դուք, այստեղի խորան, ես ձեզ ասել էի, որ մենք պատրատվում ենք փոխել այս խորանի անունը: Ճիշտ չէ, որ Բրանհամի խորան կոչվի: Դա պարզապես մարդ է, հասկանում եք: Մենք պատրաստվում ենք փոխել դրա անունը, ուրիշ անուն դնել: Մի փոքր ուշ կանցնենք դրան: Ես ուզում եմ, որ դա կենդանի Աստծո եկեղեցի լինի: Ես չեմ ուզում, որ դա մեթոդական, մկրտական, երիցական, հոգեգալստական լինի: Ես…

307 Ես իմ ամբողջ սրտով սիրում եմ բոլոր այդ մարդկանց: Ես չգիտեմ, թե ով որտեղից է: Չեմ կարող ասել: Ես պարզապես պետք է Խոսքը քարոզեմ: Ես ուռկանը նետում և քաշում եմ: Այնտեղ կան գորտեր, ծովային սարդեր, օձեր, և նաև ծուկ: Դա Աստծո գործն է՝ որոշել դա: Ես պարզապես քաշում եմ ուռկանը, Խոսքը քարոզում և քաշում եմ այն ու ասում եմ. «Ահա նրանք, Տե՛ր, բոլորը խորանի առջև են: Դու ճանաչում ես նրանց, ովքեր Քոնն են. Դու նրանց ճանաչել ես հիմնադրումից ի վեր: Ես չգիտեմ, թե ով ով է: Դու գիտես, ուստի դա Քո գործն է, Տե՛ր: Դա լավագույնն է, որ կարող եմ անել: Հիմա ես մեկ ուրիշ տեղ կգնամ և ուռկանս այնտեղ կգցեմ և մեկ այլ խումբ կբերեմ: Դա է ամենը, ինչ ես կարող եմ անել»: Շատ լավ:

Ո՜հ, ես տենչում եմ գնալ,
Ո՜հ, ես տենչում եմ գնալ,
Իմ Երկնային տունը լուսավոր ու պայծառ,
Ո՜հ ես տենչում եմ գնալ:

308 Հիմա հիշե՛ք. եթե որևէ մեկը ցանկանում է հանդիպում նշանակել, զանգեք պարոն Մերսերին՝ Բատլեր 2-1519 [Հեռախոսի համարը փոխվել է: Ծան. խմբ.]: Ուրախ կլինենք ձեզ հետ հանդիպել: Եթե ձեր սիրելիները գան և արթնության ժամանակ հարկ լինի հեռանալ…Այս երեկոյից սկսած երկու օրով գնալու եմ մեկուսանալու ինքս ինձ հետ:

309 Ես պարզապես մտնում եմ այնտեղ և գնում եմ սովորելու, այսպես. «Տե՛ր, Դու ինձ մոտ ես: Ես գիտեմ, որ Դու այստեղ ես: Քո Խոսքն է ասում, որ Դու կմոտենաս

նրանց, ովքեր մոտենում են Քեզ»: Ես շարունակում եմ աղոթել և հետևել, մինչև տեսնեմ, որ այդ Կրակե Սյունը սկսում է շարժվել: Այնժամ ես գիտեմ, որ այն պատրաստ է: Այդ ժամանակ ես դուրս եմ գալիս հարթակ բժշկության ծառայության համար, որ աղոթեմ և անեմ հնարավորինը հիվանդներին և կարիքավորներին օգնելու համար:

310 Մենք գնահատում ենք ձեր բոլորիդ սիրալիությունը: Եվ երբ գալիս եք, եկեք հավատալով, և մենք ակնկալում ենք, որ հզոր հավաքույթ կլինի: Ուզում եմ ասել, որ…

311 Եղբայր Ջեֆրիս, նա այսօր այստե՞ղ է: Մենք ուզում ենք ասել, որ բարձր ենք գնահատում Ջեֆրիս եղբորը և իր աշխատանքը: Ենթադրում եմ նա վերադարձել է կղզիներ և այլն:

312 Ուրախ եմ տեսնել եղբայր և քույր Ռայթերին, ինչպես նաև այստեղ գտնվող ձեզանից շատերին:

313 Քիչ առաջ տեսա նաև փաստաբան Ռոբերտսոնին այնտեղ, քիչ առաջ ներս մտավ: Ես ուզում էի հաճոյախոսություն անել իրեն օրերս ունեցած իր ուղերձի համար: Ոչ ոք չասաց, թե ով էր դա: Ամոթ էր: Նա շատ լավ պատգամ տվեց մարգարեության վերաբերյալ, նման էր դրան ինչ ես քարոզեցի այս երեկո:

314 Եվ այսպես, բացի դրանից այստեղ ևս մի ծառայող կար այսօր առավոտյան, ավելի ճիշտ՝ անցած երեկո, եղբայր Սմիթը, մեթոդական եկեղեցուց…թե այստեղից էր՝ Աստծո Եկեղեցուց: Ես չգիտեմ, թե արդյոք նա այստեղ է այսօր, թե ոչ: Եթե կանգնեք այս ամբիոնում և այդպես նայեք խորքը, դժվար կլինի ասել, այն հարթ է, հասկանում եք, և չես կարող ասել: Եթե դուք այստեղ եք, եղբա՛յր Սմիթ, մենք գնահատում ենք ձեզ:

315 Արդյո՞ք սա, նստած է անմիջապես այստեղ, այս եղբայրը Ջորջիայից, այստեղ նստած է եղբայր Կոլինսի հետ: [Եղբայր Նևիլն ասում է. «Այո»: Ծան. խմբ.]: Ուրախ եմ, որ այս երեկո նորից տեսա ձեզ այստեղ, եղբայր:

316 Ինչպես նաև մնացածներին, բոլորիդ, յուրաքանչյուրը գիտի, թե ով եք դուք:

317 Կարծեմ սա այն քույրն ու եղբայրն են այստեղ, ովքեր այն անգամ գնացել և աղոթել էին աղջկա համար, անմիջապես այստեղ, բժիշկը նստած է այդ մասում մի կողմի վրա: Տերն օրհնի ձեզ, բժիշկ:

318 Հիմա, դուք՝ ծառայողներ և եղբայրներ, խնդրում եմ մի նեղացեք ինձանից, որ այդքան խիստ ձևով

էի մատուցում, դժվար է, որքան կարող եմ: Սա մեր խորանն է: Սա այն է, ինչի համար մենք կանգնում ենք, և մենք ուզում ենք այն դնել հենց այդ Խոսքի վրա, և դրանով թափ տալ նրանց: Հետո, եթե դուք երբևէ դուրս գաք գծերից, մենք կվերադառնանք և կասենք. «Դուք լավագույնը գիտեիք: Ահա այն ժապավենի վրա է»: Հասկանո՞ւմ եք: Ահա խնդրեմ: «Ահա այն ժապավենի վրա է»:

319 Հետագայում ավելի շատ կունենանք այդ ամենից Լեռ: Բայց, բայց մենք...Դուք ունեք այսքանը: Մնացեք Դրա հետ, իսկ մնացածը կստանանք մի փոքր անց: Ձմերուկ ուտող մարդու նման, ով ասաց. «՛Ծատ համեղ էր, բայց դրանից դեռ էլի կա»: Այնպես որ ապագայում մենք դեռ ավելի շատ կստանանք դրանից:

320 Թող Տերն առատորեն օրհնի ձեզ: Մինչ մենք... Մկրտության ծառայություն ենք ունենալու հիմա: Ճի՞շտ է, Նևիլ եղբայր: [Եղբայր Նևիլն ասում է. «Այո, կարծում եմ՝ այդպես է»: Ծան. խմբ.]: Կա՞ այստեղ մեկը, ով հենց հիմա ուզում է մկրտվել: Մեզ համար կարևոր չէ, թե ով եք դուք. մենք...մենք այստեղ ենք, որ մկրտենք: Թող ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր պետք է մկրտվեին: Ինչ-որ մեկը, կարծեմ դա...Ահա այս տիկինը, որ այստեղ է: Կա՞ր էլի ուրիշը: Հիմա, մենք այստեղ զգեստներ ունենք թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց համար:

321 Հիմա, մենք չենք ասում. «Թողեք մկրտական եկեղեցին: Թողեք մեթոդական եկեղեցին»: Չենք ասում: Վերադարձեք ձեր եկեղեցին: Բայց եթե դուք չեք մկտրվել Սուրբ Գրքի համաձայն Տեր Հիսուսի Անունով...Ոչ միայն «Հիսուս» Անունով, այլ «Տեր Հիսուս Քրիստոսի» Անունով, դա է սուրբգրայինը: Ուրեմն սխալ եք մկրտվել:

322 Ես չեմ ուզում խնդիրներ լինեն, երբ գնամ այդ գետնի մոտ: Ես ուզում եմ ամեն ինչ այնքան պարզ լինի, որքան գիտեմ, երբ այդ տոմսը ձեռքումս լինի, հասկանում եք, որովհետև ես ուզում եմ այդ ժամանակ նավի վրա լինել: Ձեզ էլ խորհուրդ կտայի նույն բանն անել:

323 Վերադարձեք ձեր եկեղեցին: Դա ձեր և Աստծո միջև է: Դա է ամենը, ինչ ես կարող եմ ձեզ ասել:

324 Բայց ոչ ոք երբևէ Սուրբ Գրքում չի մկտրվել այլ կերպ, քան «Տեր Հիսուս Քրիստոսի» Անունով: Իսկ նրանք, ովքեր մկրտված էին, Պողոս Առաքյալի կողմից պատվիրվեց, ով ասաց. «Եթե մի Հրեշտակ ուրիշ բան

ավետարանի, թող անիծյալ լինի»: Նրանց պատվիրվեց գալ և նորից մկրտվել «Տեր Հիսուս Քրիստոսի» Անունով: Դա ճիշտ է: Եվ նա արեց դա: Եվ ինչ որ նա արեց, մեզ էլ պատվիրեց անել. մենք հենց այդ էլ կանենք, եթե Աստված կամենա:

Մենք հավատում ենք ոտնալվային: Մենք հավատում ենք հաղորդությանը:

325 Մենք հավատում ենք Քրիստոսի երկրորդ Գալուստին, Տիրոջ ֆիզիկական մարմնի տեսանելի գալուստին, ոչ որպես Հոգևոր գալուստ, այլ Տեր Հիսուսի ֆիզիկական մարմնի գալուստին փառքով:

326 Մենք հավատում ենք մեռելների ֆիզիկական հարությանը, որ մարմին կստանան, ոչ թե ծեր, կնճռոտած, ինչպես որ գնում ենք գերեզման, այլ նորը, երիտասարդության ծաղում տարիքում, հավիտյան ապրելու համար:

327 Մենք հավատում ենք հոգու անմահությանը, բացարձակապես: Մենք հավատում ենք, որ Հավիտենական կյանքի միայն մեկ ձև կա, և դա Կյանքն է, որը դուք ստանում եք Քրիստոս Հիսուսից: Դա միանգամայն ճիշտ է:

328 Դրա համար մենք չենք հավատում հավիտենական պատժին: Մենք հավատում ենք դժոխային կրակին, ծծումբին, բայց մենք չենք հավատում, որ այն այրվելու է հավիտյան. եթե այդպես լիներ, ուրեմն դուք Հավիտենական կյանք կունենայիք: Կա միայն մեկ Հավիտենական կյանք. դա գալիս է Աստծուց: Եվ դա ճիշտ է: Դուք կայրվեք, գուցե, միլիոն, տաս միլիոն տարիներ, ես չգիտեմ, բայց դուք չեք կարող Հավիտենական կյանք ունենալ: Դուք չեք կարող հավերժ այրվել...Դուք կարող եք այրվել դարեդար, բայց ոչ հավիտյան: Տեսնում եք, տարբերություն կա հավիտյանի և դարեդարի միջև: *Հավիտյան* նշանակում է դարեդար, շաղկապ, նշանակում է «ժամանակի հատված»: Բայց հավիտյան, պատիժը չի կարող լինել հավիտյան:

329 Դուք ունեք Հավիտենական կյանք, որովհետև Հավիտենական կյանքի միայն մեկ ձև կա: Եվ ով որ Հավիտենական կյանք ունի, ապրում է և Աստծո օրհնյալն է հավիտյան:

330 «Բայց հոգին, որ մեղանչում է, պիտի...»: Ի՞նչ: [Դահլիճն ասում է. «մեռնի»: Ծան. խմբ.]: Դա ճիշտ է:

Ուրեմն, չունի Հավիտենական կյանք։ Անկասկած։ Նա ունի…նա ունի պատիժ, բայց ոչ Հավիտենական կյանք։

331 Այսպիսով, տեսնում եք, ուսուցանելու դեռ շատ բաներ կան, որոնք մենք ավելի ուշ կդիտարկենք։ Տերն օրհնի ձեզ։

332 Հիմա եկե՛ք երգենք այս լավ հին երգը, մինչ մեր քույրը գնում է այնտեղ։ Կարծում եմ, այս տիկինը կարող է…

333 Ռոզելլա՛, սա ձեր մայրի՞կն է։ [Քույր Ռոզելլան ասում է. «Այո»։ Ծան.խմբ.]։ Թող Աստված օրհնի ձեր սիրտը։ Ուրախ եմ ձեզ տեսնել, քո՛ւյր, այդ բանն անելիս։ Դա շատ լավ է։

334 Ռոզելլա Գրիֆին մեր ամենահիանալի ընկերներից մեկն է։ Այս երիտասարդ կինը հարբեցող է եղել. այստեղ գտնվող ձեզանից մի քանիսը կարող է անծանոթ լինեն նրան։ Ռոզելլան դեմ չի, որ ասեմ դա։ Երբ նա հարթակ բարձրացավ այնտեղ, որտեղ…այստեղ՝ Ինդիանայում։ Եթե երբևէ տեսել եք թշվառ արարած, ապա նա նրանցից մեկն էր, արմատացած հարբեցող էր։ Չիկագոյի չորս հայտնի բժիշկներն ասել էին, որ նա…«Անանուն ալկոհոլիկները», և մնացածները հրաժարվել էին նրանից։ Բայց մի երեկո, երբ նա հավաքույթի եկավ, Սուրբ Հոգին վեր հանեց իր կյանքը և հենց այնտեղ հայտնեց նրան։ Դա կարգավորեց ամեն բան։

335 Նայեք նրան հիմա, կարծեմ երեսուն և ավել տարեկան է, բայց կարելի էր տասնութ տալ, հաճելի, գեղեցիկ երիտասարդ կին է։ Այդ ժամանակվանից մի կաթիլ անգամ վիսկի չի փորձել. դրա ցանկությունը այլևս չկա։ Ապրում է Քրիստոսի համար, շրջում է ամենուր փողոցներով, վկայելով Աստծո փառքի մասին մեղավորներին և հարբեցողներին՝ ամբողջ Չիկագոյով, ինչ–բան անելով Տիրոջ համար։

336 Նա մկրտվել է Տեր Հիսուսի Անունով, և նրա մայրիկն այսօր եկել է նույն բանն անելու. եթե Աստված կարողացել է բժշկել նրան, եթե Հիսուսը կարողացել է բժշկել նրան…«Ինչ որ անեք՝ թե խոսքով, թե գործով, բոլորը…Անունով արեք»։ [Եկեղեցին ասում է. «Հիսուս Քրիստոսի»։ Ծան. խմբ.]։ Ահա թե ինչ է Աստվածաշունչն ասում։ Դա ճիշտ է։

337 Լավ, մենք հիմա մկրտության ծառայություն ենք ունենալու։ Մի քանի րոպեյով մենք լույսերը կանջատենք, մինչ պատրաստվում ենք ծառայությանը, մկրտելու

համար, իսկ, իսկ հետո լավ ժամանակ ենք ակնկալում Տիրոջ մեջ։

338 Դո՞ւք եք անցկացնելու մկրտության ծառայությունն այսօր։ Շատ լավ, դու ավելի լավ է, դու ավելի լավ է պատրաստվես։ Իսկ ես կսկսեմ, կառաջնորդեմ երգեցողությունը և այլն, մինչ շարունակում ենք։ Մինչ նրանք պատրաստվում են…[Եղբայր Նևիլն ասում է. «Դո՛ւ, այստեղ՝ հետևում զգեստներ կա՞ն»։ Ծան. խմբ.]։ Մկրտության զգեստներ, դո՛ւ, արագ։ Լավ։

339 Եկե՛ք երգենք այս բարի հի…[Չձայնագրված հատված ձայներիզի վրա։ Ծան. խմբ.]։

340 Իսկ մինչ մենք կանենք դա, մինչ բաժանվում ենք, ի՞նչ պետք է անենք։

Վերցնենք մեզ հետ Հիսուս Անունը,
Խոնարհվելով Նրա ոտքերի տակ,
Թագավորների թագավոր Երկնքում մենք
Նրան կթագադրենք,
Երբ ուղին մեր վերջանա։

Լավ, կանգնենք։

Հիսուսի Անունը քեզ հետ վերցրու,
Որդի տառապանքի, ցավի և վշտի,
Այն քեզ կտա սփոփանք, և կուրախանաս,

341 Ես ձեզ կասեմ, թե ինչ անեք։ Շրջվեք և սեղմեք ձեզ մոտ գտնվողներից մեկի ձեռքը և ասեք. «Բարև ձեզ, եղբայր։ Ուրախ եմ ձեզ հետ ծառայությունում լինելու համար»։

Թանկագին Անուն, քաղցր սրտերում
…խնդություն Երկնքում.
Թանկագին Անուն (թանկագին Անուն)
Օ…

58-0928E Օձի սերմը
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org